


ԴՐՈՇՆԿ



„ՀԱՅ ԵՆԴԱՓՈՒՍԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ՝ ՕՐԳԱՆ

ԿԱՄԱՐԱԿԱՆ ԿՈՒՆԻ ԱՌԹԻԻ

ԱՏա՛ դարձեալ մի նոր ճակատամարտ, գործեալ մի նոր ընդհարում:

Անցեալ Օգոստոս ամսի սկզբներին, Սասունի Ապրատամբուկեան և Կոստրածի Ծարեգարձին բոլորքով, ծագում է մի նոր կռիւ, այս անգամ Տաճկահայաստանի մի այլ մասում՝ Երզնկայի շրջակայքում:

Հայ հրոսակային մի խումբ՝ բռնելով Երզնկայի և Կամահի մէջ ընկած կիրճը, յարձակում է գործում զինւորական դայմագաթի, չորս զինւորների և մի հայ անասնաբոյժի վրայ, վերաւորում, սպանում է մի երկուսին և խլում բոլորի զէնքերը: ԱՏա այս է լինում հուլի ամիսը:

Կառավարութիւնը՝ հատաղած հայերի այս յանդուգնութիւնից, ահաբին թւով հետեակ և հետեալ զօրք, թնդանթներ է հանում՝ հայ հայդուկներին հաշածելու, և ապա նա գրգռում է տաճիկ և քուրդ ամբողջ հայերի դէմ՝ օգտուելով հանգամանքից ի հատարածել իր «ծրագիրը»: Հայդուկները, թւով 17 հոգի, մի այլպիսի բազմութեան դիմաց չեն նահանջում, դիմադրում են քաջաբար. 5-6 օր պաշարւած և նօթի մնալով, վերջապէս նրանք յաջողում են գրաւել Սեպուհ լեռան քարայրը, ուր մի վերջնական քաջարի մարտ տալով, նոյն իսկ յաղթող են հանդիսանում...

Այս կռիւն հետեւում են սուլթանի կառավարութեան սովորական լկտի և վայրենի աւերումները, որ նա գործ է դնում խեղճ ժողովրդի վրայ:

Սասունի պատերազմից յետոյ այս երկրորդ մեծ կռիւն է, որ տեղի է ունենում Հայաստանում: Առաջի նման սա ևս կրկին գրաւեց Եւրոպական մամուլի և պետութիւնների ուշադրութիւնը դէպի այն թշուառ և հարբստահարւած երկիրը: Բայց ի՞նչ արեցին այդ պետութիւնները մի ամբողջ տարւայ ընթացքում՝ այնքան քո-

ռում՝ գոչուկից, փառաւոր խոստովներից՝ յետոյ, որ այժմ՝ այս հուլից յետոյ կարելի լինի նրանցից մի դրահան բան ապասել: Ճիշտ է, նրանք ճիջամտեցան, պատրաստեցին ընթացների մի խղճուկ Երագիր, առաջարկեցին սուլթանին ընդունելու, սա էլ մի քանի աթիւններ ձգձգում, քաշ է տալիս, մի օր համաձայնում, հետեւալ օրը մերժում է. մեծ պետութիւնները պնդում, և սպառնում են, իսկ... սայլը դեռ պնտեղ է և ոչ ոք նրանցից ոչ մի քայլ չի անում՝ նրան տեղից շարժելու, կամ, աւելի ճիշտն ասած, չեն ցանկանում անել:

Իսկ մինչ այդ՝ հրոսակային ճակատամարտ է պայթում Ասպուրականի նահանգում՝ Չխուրի մտ. տեղի են ունենում ցոյցեր, (Պոլսում), հատարում են մէկը միւսի հետեւից լրտեսների, մատնիչների մի շարք ըսպանութիւններ, որոնք ահ ու սարսափ են գցում կառավարչական շրջանների վրայ... Ապա այս բոլորին ահա հետեւում է Երզնկայի նշանաւոր կռիւը, կռիւ, ուր մէկ հայդուկի դէմ դուրս եկած են լինում մի քանի տասնեակ զինւորներ:

Սուլթանական կամայականութիւններին, բարբարոսութիւններին և Եւրոպական պետութիւնների քստմեղի անտարբերութեան հոյ յեղափոխականը պատասխանում է նորանոր ճակատամարտերով, մէկը միւսից ուժեղ հարւածներով:

Մի անգամ յայտարարւած կռիւը շարունակում է աւելի մեծ հաստատակամութեամբ, աւելի ուժգին, աւելի տոկուն կանոնաւորութեամբ: Աւելի և կուում են վրէժխնդիր լինելու բաշխօրոյկ կառավարութիւնից. մի անգամ պարզած կարմիր դրօշակը վայր չի դնուիլ, մինչև որ չերագործւի նախագծած կէտնապատակը:

Եւ մինչ մի կողմից Եւրոպական դիպլոմատիան առաջ է տանում իր նենգամիտ քաղաքական խաղերը՝ անուշադիր թողնելով տեղի ունեցող հրեշաւոր արարքները, իսկ միւս կողմից գազան սուլթանի օրհասական կառավարութիւնը կրկնապատկում իր վայրենի ճնշումները, իր ճիւղային անիրաւութիւնները:— Հայ յեղափոխականը

և նրա հետ ամբողջ ժողովուրդը՝ արհամարելով կապանք, բանտ և մահ, այլ դասեր է տալիս, այլ նոր և նոր հարածներ հասցնում:

Հայդուկային խմբերի կռիւները երկրի զանազան մասերում, մասնիչների, պաշտօնեաների զարկումները, — ահա գործունէութեան այն ծրագիրը, ուղիղ ճանապարհը, որին հետևում են հայ յեղափոխականները՝ տոկունութեամբ առաջ տանելով կռիւր:

Անմտութիւն կը լինէր ծալել ձեռքերը, ծռել շլինքը, նստել ամբողջ տարիներով սպասել, մինչև որ տաճկահայ ժողովուրդը զինւած լինի, ապա այն ժամանակ միայն գուրս գալ կուրի դաշտ... Ո՛չ, դա սխալ կարծիք է, դա նոյն իսկ շատ կորստաբեր հետևանքներ կարող է ունենալ, մանաւանդ ներկայ ճգնաժամին:

Յիշենք դարձեալ պրօպագանդայ անել, պատրաստել ժողովուրդը հարկաւոր է ոչ միայն լոկ խօսքով, այլ և դրական, շօշափելի գործերով. անհրաժեշտ է, ուրեմն, մի կողմից կուրել ունեցած ուժերով թշնամուհետ զանազան տեղերում, տէրրօրի ենթարկել վարչական և այլ մարդկանց, սպանել, հարածել, ջլատել սուլթանական կառավարութիւն կուրած մարմինը երկրի բազմաթիւ կէտերում, ահա այն միակ նպատակայարմար միջոցը, ուղին:

Այս են մեզ թելադրում բուն երկրի ներկայ պայմանները, այս է մեզ թելադրում առողջ բանականութիւնը, այս է, վերջապէս, մեզ սովորեցնում միւս ազգութիւնների յեղափոխական պատմութիւնը:



ԵՐԶՆԿԱՅԻ ՏԱԳՆԱՊՐ

ԿԱՄԱԽՈՒ ԶՈՐԻ ԵՒ ՍԵՊՈՒՀ ԼԵՌԱՆ

Կ Ո Ւ Ի Ի Ը

Յեղափոխութեան ս. Գործը վաղուց արդէն Երզնկայ մուտ գտած ըլլալով, ահագին մեծ ոյժ է, կազմակերպութիւն մը ստացած էր, որուն թւին տակ կը գտնուէր 17 հոգիէ բաղկացած և Քեռիի առաջնորդութեամբ հայ հայդուկախումբ մը:

Օգոստոս ամսու սկզբներէ հայդուկախումբը տեղեկանալով որ Վամախէն Երզնկայ պիտի ճամբորդէ զինւորական կայմագամ մը 4 զինւորներով մէկ հայ անասնաբոյժ քօլ աղասիով (Պօղոս Տասեան), իսկոյն

կը շտապէ Վամախի ձորին մէջ ամուր դիրք մը գըրաւել և յարձակիլ վրանին, թէ վրէժխնդիր ու կառավարութեան դէմ ցոյց մը ըրած ըլլալու և թէ զէնքերնին գրաւելու համար:

Երբ զինւորական ճամբորդները Վամախի կիրճը կը մտնեն, հայդուկախումբը իր ներկայութիւնը կզգացընէ, զէնքի դիմելով և անձնատուր ըլլալին հրամայելով:

Զինւորները զէնքով կը փոխարինեն ու կը դիմադրեն, ասոր վրայ գնդակ մը հայ հայդուկի մը հըրացանին փողէն դուրս գալով, կը ծակէ չաւուշներէն մէկուն կուրծքը և մահը անմիջական կըլլայ: Գիմադրութիւնը սակայն կը շարունակուի. երբ երկրորդ զինւոր մըն ալ ծանրապէս վիրաւոր կիյնայ, ճամբորդները կստիպուին անձնատուր ըլլալ: Հայ հայդուկախումբը ճամբորդներուն մօտենալով, զէնքերնին կը գրաւեն:

Հայ հայդուկներուն այս քաջութիւնը կառավարութեան շատ ծանր կընստի, մանաւանդ Միւշիք Զէքի փաշան կատարած շուն կը դառնայ և անմիջապէս կը հրամայէ երեք վաշտ զօրք, թէ հեծեալ և թէ հետեւակ երթալ «աւազակները» հալածել:

Միւշիքն ատեն Վամախի բեգերէն Թահիր փաշային ալ մարդ կը ղըկեն, որ իր աւազակ քրդերէն խել մը մարդ առնելով զինւորներուն աջակից դառնի: Այս վերջինն ալ իրեն եղած հրակերին վրայ ղլխին 300 անօթի քրդեր ժողելով լաւ առիթ մը կը սեպէ հայ գիւղերը թալանի տալու:

1000-էն աւելի կանոնաւոր զօրքը, նոյնչափ ալ քիւրդ և թուրք խուժանին միացած՝ սկսաւ Վամախի հայ գիւղերուն վրայ ահուելի խժգժութիւններ գործել, որպէսզի հրոսակախմբին ո՞վքեր ըլլալին և ո՞ւր ապաստանելին իմացնեն:

Հայ գիւղերու և վանքերու աւերումները չափ ու սահման չունին. ամեն ինչ, որ ձեռք կըրցած են անցունել, իրենց սեփականած են և բոլոր ուտելիքները, պարէնները, ոչխարները և ընտանի անասունները կերած, հատուցած և թալանի տւած են:

Վանքի բնակիչներու ղօլթուխին տակ հաւկիթը խաշելով կը դնեն, որպէս զի չգիտցածնին խոստովանին. հարսերու և կոյս աղջիկներու պատուոյ բռնաբարութեանց չափ ու սահման չկայ: Լուսաւորիչ Աւագ վանքերը Միւշիք Զէքիին Եաւէրը թալանց ու ամայի դարձուց բոլոր արծաթեղէն և թանգակին դարդերը գողացաւ, մանաւանդ Գրօթըր հազարապետին 5000 (հինգ հազար) ոսկի արժեցուցած վանքին մէկ հնութիւնը (դեղլթափ) բոլորովին իւրացուց:

Հայ հայդուկապետ Քեռիին մայրը Երզնկայ բեր-

լով բանտարկեցին. քոյրը հազիւ հազիւ գաղան զին-
ւորներուն ձեռքէն ազատելով, քաղաք բերին, եղբայրը
Գրիգորը այն ատիճան ծեծեցին, որ Երզնկայ փոխա-
գրած միջոցնուն մեռաւ:

Այս հալածանքներու և աներևակայելի չանչարանք-
ներու տակ հրոսակախմբին ապաստարանը կը մատնւի.
Խսկոյն բոլոր զինւորական զօրութիւնը միացած քիւրդ
և թիւրք խուժանին կը յարձակի Սեպուհ լեռի հը-
րոսակաց ապաստարանը եղող քայրարին վրայ: Հա-
զարներով գնդակներ անձրևի նման կը տեղայ քար-
այրին վրայ. հայ հայդուկները անմիջապէս հրացանա-
ձգութեան կսկսին՝ քաջաբար դիմադրելով 5-6 օր ա-
նօթի ու հալածեալ ըլլալով հանդերձ, թշնամիին դէմ
5 ժամ անընդհատ կը կռւին և վերջապէս յաղթու-
թիւնը իրենց կողմը և ամօթը անամօթ Համիդի խայ-
տառակ զինւորներուն կողմը մնալով, կը յաջողին 25-
30 զինւոր սպանել և հեռանալ կուռց դաշտին վրայ
2 մեռած ձգելով Արմենակ Պոյաճեան և Սեպուհ Գա-
լայճեանը, 3 հոգի ալ Գէորգ Եանրխեան, Սուքեաս
Յովհաննէսեան և Պետրոս Գազանճեան ողջ կը բռնուին.
Իսկ մնացեալ 11 հոգին պատուելով թշնամեաց բանա-
կը բոլորովին ապահով, կուռց դաշտէն կը հեռանան
և հետքերնին կանհետացնեն: Այս 11 հոգիին այնչափ
գնդակներու և զօրքերու միջէն ողջ առողջ ազատելնին
դրեթէ հրաշք մը կը համարուի և Ջէքի փաշան, Սաս-
նոյ կոտորածին դիւցազնը, անոնց ազատիլը լսելով,
բարկութենէն քիչ մնաց կաթուածահար ըլլար:

Երկու խնձորեկցիներ 10 օր քաղաքին մէջ պահ-
ւելէ յետոյ՝ ուզեցին գիւղ երթալ գացին ու բռնուեցան:

Այժմ վանքերը բոլորովին փլատակ ու ամալի են,
բնակիչները քաղաք փախած են: Լուսաւորիչ վանքին
ծառան՝ իբր գործակից հրոսակներու, ձերբակալած է:
Հայդուկ խմբին ողջ բռնւողներէն Գէորգ Եանրգեան կը
մատնէ իր խմբի ընկերներուն, բոլորի անունները և
քաղաքացիներ ալ բերան կուտայ. ծեծի հարւածներու
տակ Շիշմանեան Գրիգոր անոր կը հետևի և ահա եր-
կուշաբթի երեքշաբթի օրեր ձերբակալեցան Վ. Հոդ-
կրողեան, Պ. Փողարեան, Տ. Սարաֆեան, Ե. Տուր-
սունեան, Վ. Մարկոսեան, Ա. Հինայէկեան, Վ. Գազան-
ճեան և ուրիշներ, ընդամենը 47 հոգի և դեռ կը շա-
րունակուին ձերբակալութիւնները:

Մատնուեցաւ նաև զէնքերու, գործիքներու, զգեստնե-
րու և թուղթերու քարայրը և ամեն ինչ կառավա-
րութեան ձեռքը հասաւ:

Մատնիչներ կը շատնան. յայտնի մատնիչ Արմենակ
Հայկունին սկսաւ բացարձակ գործել բայց արժանի
վարձադրութիւնը ստացաւ. երեկ երեկոյ շուկայէն

տուն դարձած պահուն ահաբեկիչի մը գնդակը կը
ձակէ ձախ կողմը կրնակէն. մէկ ու կէս ժամ վերջը
գնդակը թէև հանեցին, սակայն մահը անխուսափելի
է: Ահաբեկիչը ապահով է:

Մանրամասն տեղեկագիրը յետոյ կը ղրկեմ:
Երզնկայի առաջնորդարանին կողմէ պատրիարքարան
և դեսպանատներուն տեղեկագիրներ ղրկւած են:
Վերևայ, թէ Երզնկայ քիչ ատենէն Կնկիւրի մը պի-
տի դառնայ:

Ր Է Ֆ Օ Ր Մ Ն Ե Ր Ը

VI

(Վ Ե Ր Զ)

Մենք ցոյց տուինք, որ երեք պետութիւնների Ծրա-
գիրը ոչ մի արմատական փոփոխութիւն չէ առաջացնում
Տաճկահայաստանում, որ իսկապէս իրերի դրութիւնը մնում
է նոյնը. բայց և այնպէս կարող է պատահել, և այդ-
չատ բնական կը լինի, որ այդ ըէֆօրմները ներմուծ-
ւելով Տաճկահայաստան, առաջ բերեն ըէակցիա դէպի
յեղափոխութիւնը, ժողովուրդի մասսան առաջի քայլում
սկսի խոյս տալ յեղափոխականներից, յեղափոխա-
կան շարժումից, այս ոչինչ չէ նշանակում, սա փաստ
չէ, որ ժողովուրդը գոհ է նոր դրութիւնից, որ նա
հաշտուում է, որ այդ էր իր իղձը—ուղածը, բոլորովին
այ. և այդ շատ հասկանալի պատճառով. երկար ժամանա-
կեայ անընդհատ կռիւները, լարւած և նեարդային դրու-
թիւնը հոգնեցրած լինելով ժողովուրդին, նա, ժողովուր-
դը առաջի քայլումն զեղումն կանի. այսինքն առ ժա-
մանակ կը հաշտուի նոր պայմանների հետ, որ ասել
է՝ թէ ինչպէս սկսւել է նրա նեարդների ուժասպա-
ռութիւնը, նոյնն սկսւել է և տեղի ունենալ նրա
հասարակական կեանքում:

Այս երևոյթը շատ անգամ է խաբուսիկ լինում կա-
ռավարութիւնների համար. ըէակցիան նրանք ընդունում
են ժողովուրդի կողմից, իբրև զինաթափութիւն, հաշտու-
թիւն և համաձայնութիւն նոր դրութեան հետ—որի
հեղինակը ինքը ժողովուրդը, նրա կեանքը չէ, այլ ո՞մի
կողմնակի, մի երկրորդական ձեռք—, և ոչ թէ մի բնա-
կան ու հասկանալի երևոյթ, հետևանք նրա լարւած
դրութեան ուժասպառ լինելուն, որ առաջ է եկել
նոր դրութիւնից, որովհետև այդ նոր դրութիւնը առա-
ջին անգամից դազանային չէ թուալու նրան, որովհետև

նրա հետ դործ ունեցող պաշտօնեաները առաջին քայլում լինելու են մեղմ, քաղաքավարի, այս առաջին անգամից հաճոյական դրուժիւնն է, որ իջեցնելու է նրա լարւած լինելը ու առաջ է բերելու թուլութիւն, ինչպէս էլ լինում է անհատի մարմնական օրգանիզմում, իսկ հասարակութիւնը՝ լինելով գումարումն այդ անհատների, նոյն սպառութիւնը կատարում է և նրա հասարակական կազմակերպութեան մէջ իբրև արտացոլացումն անհատայինի:

Մենք ասում ենք, որ այն երեւոյթը խաբուօիկ է, որ սա չէ նշանակում թէ ժողովուրդը գոհ է իւր նոր դրութիւնից, որովհետեւ բաւական է, որ ժողովուրդի հոգնածութիւնը անցաւ, նրա նեարդները կազդուրեցին, նա նորից կը սկսի իւր կոիւր և այն էլ աւելի ուժգին. դեռ այս անգամ նա աւելի կատաղի կը լինի քան նախընթացումն էր, որովհետեւ նրա յիշողութեան մէջ վերարտադրելով, պատկերանալով անցեալը իւր բոլոր սարսափներով, իսկ ներկան իւր դժոխային կրակով, նա կընկնի թշնամու վրայ ամենածայրայեղ, յուսահատ, գրգռւած ու վրէժխնդրական ոգով լցւած և այն ժամանակ նրա դիմացը այլ ևս ոչինչ չի կարող կանգնել, սարերը կարող են կործանուել: Սա մի բնական, միւսնոյն ժամանակ պատմական երեւոյթ է, սա մի ճշմարտութիւն է:

Քանի որ չէ իրականացած իր ժողովուրդի բազմանքը, քանի որ նա չէ ձեռք բերել իւր մարդկային իրաւունքները, քանի որ նա ազատ մարդ չէ ազատ երկրում, քանի որ նա իւր նպատակին չէ հասնել, միանգամայն ցնորք կը լինի մինչև իսկ կործնել թէ Տաճկահայաստանում կարող է տիրել խաղաղութիւնը, թէ ժողովուրդը կարող է հանդուստ ալ այն պայմանների հետ, որտեղ տիրողը ուզուի պատրաստներն են. ցնորք է ենթադրել թէ յեղափոխական ժողովուրդը հրաժարում է իւր կոչումից, իւր միստիայից, իւր պատմական դերից, այսպէս ենթադրել կը նշանակէ Հասկանալ պատմութիւնը, Հասկանալ ժողովուրդական կեանքը:

Յեղափոխութիւնը առաջանում է ժողովուրդի իրական կեանքում գոյութիւն ունեցող պայմաններից, ժողովուրդին յեղափոխութեան դրդողը ինքը կեանքն է և քանի որ կան, ապրում են այդ պայմանները, յեղափոխութիւնն էլ անխուսափելի է. արհեստական միջոցներով կեանքի ընթացքը չի կարելի ոչ միայն կանգնեցնել, այլ և փոխել. և որովհետեւ երեք պետութեան Ծրագիրը ոչինչ չէ փոխում, ժողովուրդին յեղափոխութեան դրդող պայմանները մնում են իրենց մինչև իսկ առնական հասակում, անխուսափելի է լինում և Տաճկահայաստանի յեղափոխութիւնը: Մրանից նոյնպէս հետեւում է այն, որ եթէ Ծրագիրը ներմուծուի, յե-

տոյ մասսայի մէջ սկսւի ընկալի դէպի յեղափոխութիւնը, դա առժամանակեայ է, հետեւապէս և յեղափոխականը չպէտք է մի րոպէ յուսահատուի, թուլանայ, չպէտք է մի րոպէ անգամ կորցնի. պատմութիւնը և կեանքի օրէնքները նրա կողմն են, նա պէտք է իւր դերի մէջ գտնուի, լինի միշտ ժողովուրդի մէջ, ժողովուրդի հետ կատարելով իւր ազգատարի ու պրոպագանդիստի դերը մի կողմից, միւս կողմից հարւածներ տալով թշնամուն, նրա խօսքը ձայն բարբարոյ յանապատի չի մնալ. նա ապառաժների չի հանդիպիլ հող կայ սերմ ձգելու, ընթացիկները ոչինչ չեն ջլատել. յեղափոխականները պահպանում են իրենց ոյժը և կենսականութիւնը:

Եւ միթէ սա չէ սարսափեցնում նրանց, որոնք իրենց ուսերի վրայ են առել լուծելու Հայկական խնդիրը, որը կապւած է Վրեւելեան խնդրի հետ.— յեղափոխականները չեն մոռացել այս: Միթէ այդ ընթացիկները առաջարկողները ու նրանց հաւանողները չեն տեսնում, որ ժողովուրդին յեղափոխութեան դրդող ուժերը իրական կեանքի պայմանները ու յեղափոխականները մնում են անմիաս, պահպանում են իրենց կենսականութիւնը. ինչ ապահովութիւն, ինչ առհասարակաց ունին դրանք՝ որ գորդեան հանգոյցը լուծում է և իրենք կարող են հանգիստ խղճով յետ քաշել ասպարեզից. ոչ մի և դիպումատիան անկարող էր պլ կերպ վարել, նրա կոչումը չէ հանդիսանալ ժողովուրդների ազատութեան գործին նպաստող ու պաշտպանող այլ որքան կարելի է առաջ բերել այնպիսի պայմաններ, որոնցից թէ դժգոհները գոհ լինեն և թէ ինքը օգտուի: Բայց այս անգամ այդ բանը նրան չյաջողեց, որովհետեւ անկարող եղաւ գոհացումն տալու թէ դատապարտողին, և թէ դատապարտողին, երկու կողմնին էլ իրենց դժգոհութիւնն ու անբաւականութիւնն են յայտնում: Վարելի է հաւատացած լինել, որ վաղը կամ միւս օրը դատապարտողը սուլթանի կառավարութիւնը, մի թեթեւ, բայց դրական հարւածի երկիւղից ստիպւած կը լինի ընդունել այդ վճիռը— երեք պետութիւնների առաջարկած ընթացիկների Ծրագիրը, բայց դա երբէք չի լուծիլ խնդիրը, որովհետեւ դրանով գոհացում չի դրում դատապարտողին— ժողովուրդին: Հայ ժողովուրդի կեանքը մշակել է նրա պահանջները և նա շատ լաւ գիտէ, թէ ինչ պայմաններ, ինչ Ծրագիր կարող է ապահովել նրա կեանքը, աշխատանքը, պատիւը, խօսքը. և որովհետեւ այդ պահանջը մշակել է ինքը՝ կեանքը, ուստի և չպէտք է երկիւղ կրել ոչ մի ընկալիցից— դա նեարդների ուժասպառութիւն է, դա ժամանակաւոր է, հայ ժողովուրդը զինաթափ չի լինիլ և չի էլ կարող լի-

նել — դրա համար հարկաւոր է, որ նա հրաժարւի մարդ լինելուց... Ոչ նորագոյն բէֆօրմներ ծրագրիւրը հարցը չէ վճռել, նա մնում է բաց, դրա հետ և յեղափոխական գործիչների ասպարէզը:

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը ներկայ ծանր ընդհանուր հաւատարիմ է մնացել իւր կոչմանը, իւր պատմական դերին և իւր Ծրագրին նա մի ընդհանուր ազգից չէ թողնել թշնամուն և շարունակել է իւր գործունէութիւնը ուժերի համեմատ՝ իւր ընդունած տակտիկայով, նա մի վայրկեան անգամ չի կանգնել, զինաթափ չի եղել ու դիտողն դերի մէջ մտել: Երեք պետութիւնների Ծրագրիւրը ընդունելու-չընդունելու, մի և նոյն է, Հայ Յեղ. Դաշնակցութիւնը զինաթափ չի լինելու, մինչև նա լիակատար յաղթութիւնը չտանի Հայ Յեղ. Դաշնակցութիւնը՝ հաւատարիմ մնալով ժողովրդի դատին, հանգամանքների թեթև փոփոխման հետ, որ ոչինչ չէ առաջացնում, այլ պահանջներ չէ դնում և չէ փոխում իւր տակտիկան—օպորտունիզմը նրան օտար է. երբ տեղի է ունենում մի որ և է երևոյթ, փոփոխութիւն, որ յօգուտ ժողովրդի դատին է կատարում, նա մատնացոյց լինելով դրա վրայ՝ նկատում է դա իբրև մի քայլ առաջ, շարունակելով իւր գործունէութիւնը, կուելով բռնակալութեան դէմ, կուելով այն բեժիմի դէմ, որ ամեն բան է բացի մարդկային լինելուց, որի համար չկայ, գոյութիւն չունի ոչ մի սրբութիւն, մարդկային ոչ մի վսեմ զգացմունք ու հասկացողութիւն. քանի կայ այս հրէշը, Յաճկահայաստանը կը լինի, իբրև գերեզման այնտեղ ապրող ժողովրդների համար:

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը լինելով յեղափոխական կուսակցութիւն, որ ունի իւր Ծրագրիւրը, որ հետևում է որոշ հասարակական-քաղաքական Վարդապետութեան, չէր կարող ուրիշ կերպ վերաբերուել մի այնպիսի Ծրագրի, որ հիմնած է ամբողջովին մաքիաւէրիզմի վրայ: Եւ նա կատարեց իւր պարտքը—մերժեց երեք պետութիւնների Ծրագրի ոչ միայն ամբողջութիւնը, այլ և մանրամասնութիւնը. նա չգտաւ ոչ մի կէտ, որ կարող է բաւականութիւն տալ ժողովրդին, չգտաւ ոչ մի կէտ, որ պահանջում է ժողովրդի իրաւունքը, և հասկանալի է. Դաշնակցութեան և դիպլոմատիայի մէջ ոչ մի առնչութիւն չկայ, սրանց դօկտրինաները ամենածայրայեղ կերպով հակառակ են:

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը՝ կատարելով իւր դերը—կուելով բռնակալութեան դէմ և նպաստելով ժողովրդական-ազատական կառավարութեան յաղթանակին, դրանով վերջացրած չէ համարում իւր միսիան, իւր կոչումը. դրանից յետոյ նրա համար սկսւում է նոր ասպարէզ, նոր պայմաններ, հետևապէս և այլ

տեսակի գործունէութեան եղանակ—այլ միջավայր—այլ միջոց, այլ թշնամի—այլ զէնք—, որովհետև այն հասարակական վարդապետութեան, որին հետևում է Դաշնակնակցութիւնը, յաւակնութիւն ունի ստելու, որ նա, վարդապետութիւնը յաւիտենական է մինչև այն ժամանակ, քանի որ ինքը՝ մարդկութիւնը գոյութիւն ունի:

Եւ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը՝ հաւատարիմ մնալով իւր սկզբունքին, կը շարունակէ միշտ ծառայել ժողովրդական գործին, աշխատաւոր մարդկութեան յաղթանակին, որը կը լինի և իւր կուսակցութեան յաղթանակը: Սա իւր համոզմունքն է և համոզած լինելով այսպէս, հաւատացած լինելով, որ քայքայն այն հասարակական վարդապետութեանն է, որին ինքը հետևում է, կը շարունակէ կուելու. կուել մէջն է կեանքը, կուել մէջն է յաղթութիւնը. որքան ցաւալի է, որքան հակամարդկային է, բայց այս է ճշմարտութիւնը, այս է պահանջում ներկայ հասարակական կեանքը, ներկայ մարդկութիւնը և մենք կը կուենք:

ԽՈՍՏՈՎ ԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՒԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԱՄԲՐԻ ԿԱՐԴԱՊԵՏ ՊԵՆԷՍԵՆԻ

(Վ Ե Ր Զ)

- Հարց. — Հնչակեան քօմիթէն Փորթուգալեանի պէս ժողովրդէն դրամ չի՞ պահանջիր:
- Մամբ. — Մինչև ցարդ երբէք ո՛ր և է գումար մը պահանջած չէ հայերէն. մինչև անգամ «Հնչակ» թերթը որոշեալ բաժանորդագրին մը անգամ չունի. ով որ թերթ ուզէ՝ փոխարէնը չը պահանջիր. ինձ այնպէս կը թւի, թէ այդ ընկերութիւնը շատ հարուստ է:
- Հարց. — «Հնչակ» թերթը ո՛ր կը հրատարակի և քօմիթէի կեդրոնը ո՛ր է, կրնա՞ք գիտնալ:
- Մամբ. — Հնչակեան քօմիթէի կողմանէ Պոլիս խրուկած ներկայացուցիչ Մ...ն անձի հետ տեսնած եմ: Մ...նի ըսածին նայելով՝ «Հնչակ» թերթը Զւիցերիոյ մէջ կը հրատարակի և քօմիթէի կեդրոնը Հայաստանի գլխաւոր քաղաքի մը մէջ է, այս ընկերութիւնը շատ հարուստ ըլլալով՝ ժողովրդէն նւեր և կամ թերթի բաժանորդագրին պահանջելու պէտք չունի:
- Հարց. — Այդ անձը այժմ Պոլիս կը գտնուի և դուք կրնա՞ք ցոյց տալ մեզ, այնպէս չէ՞:

Մամբ. — Եթէ Մ...եան դեռ Պոլսոյ մէջ է, անպատճառ կրնամ գտնել զինքը. բայց ամիսէ մը աւելի է, որ զինքը տեսած չեմ. այսինքն Գում-Գարուի դէպքէն մի քանի օր առաջ Իսկիւտար եկած էր. այնտեղ տեսնեցանք, այն օրէն յետոյ կրկին չտեսայ անիկա:

Հարց. — Այդ մարդը ո՞ւր կը բնակէր, ազգական ունէ՞ր, պանդոկի մէջ էր. անշուշտ պիտի գիտնար:

Մամբ. — Որոշ չեմ գիտեր իր բնակավայրը, բայց կարող եմ իմանալ:

Հարց. — Ինչպի՞սի անձ է այդ Մ...եանը, երիտասարդ է թէ տարիքոտ:

Մամբ. — Երկայնահասակ, մօրուսաւոր. երկայն մազերով, սև աչքերով, բաւական գեր և մօտ 30 տարեկան անձնաւորութիւն մը է, բնիկ տ...ցի:

Հարց. — Որո՞նք են ձեզի ծանօթ անձերը, որք քովի թէի անդամ են այս տեղ:

Մամբ. — Մ...եան, Նիկողոս Պուլպուլեան՝ բնակեալ Իսկիւտար, իրաւագիտական վարժարանի ուսանող, Գրիգոր Քրլըճեան, նոյնպէս իսկիւտարցի, Քրիս Բաբայեան, ուսուցիչ Իսկիւտարի Սէլամսըզի վարժարանին, Արմենակ Հայկունի՝ պաշտօնեայ Ղալաթիոյ Օսմանեան թղթատան մէջ, Կարապետ Պասմաճեան՝ դեղագործ Իսկիւտար Սէլամսըզ. կան նաև բազմաթիւ հայեր, որոնք քովի թէի անդամ ըլլալով մասնակցած են նաև Գում-Գարուի ցոյցին, բայց անոնք անձամբ ճանչնալով միայն անունները ինձ անձանօթ են, վաղը տեղեկանալէ յետոյ իւրաքանչիւրի անունը և բնակավայրը նշանակելով անւանացանկ մը պիտի բերեմ ձեզ *):

Հարց. — Այս ընկերութեանց մէջ անշուշտ կրօնական անձինքներ ալ կը գտնուին, և դուք կրնաք ցոյց տալ մեզ զանոնք:

Մամբ. — Հայերուս մէջ շատ եկեղեցական յեղափոխականներ կը գտնուին և անոնց անունները յայտնի են ինձ, ինչպէս Պէշեկթաշի քարոզիչ (Պէշեկթաշ քիլիսանըն վախի) Խորէն եպիսկոպոս Լուսինեան, Իսկիւտար ս. Խաչ եկեղեցւոյ քարոզիչ Գրիգորիս եպիսկոպոս Ալեաթճեան, Երբեմն Եէնի Մահալլէի եկեղեցւոյ քարոզիչ, իսկ այժմ Եգիպտոսի առաջնորդ Մատթէոս եպիսկոպոս Իզմիրեան, Բերայի քարոզիչ Գարեգին եպիսկոպոս Սրւանձտեանց, ասոնք ամենին ալ յեղափոխական և իրենց քարոզներով ժողովուրդը գրգռիչ անձնաւորութիւններ են, բայց ասոնց նկատմամբ հաստատական փաստեր չունիմ իմ ձեռին, եթէ աշ-

խատիմ, ապահով եմ, որ պիտի կրնամ ձեռք բերել իրենց Օսմանեան տէրութեան անհաւատարիմ ըլլալուն առթիւ ապացուցական թուղթեր և ճշմարիտ վկայութիւններ:

Հարց. — Պոլսոյ մէջ եղած քովի թէներու պետը մի ուսաստանցի հայ է եղեր, այդ անձը ո՞ւր կը բնակի և անունը կրնա՞ք ըսել մեզ:

Մամբ. — Այո, կը յիշեմ, որ այդպիսի մէկը կայ Պոլսոյ մէջ, օր մը Գրիգոր Քրլըճեան ինձ տարաւ Բերա Քէրէզիյէ փողոցի մէջ տուն մը և այնտեղ ներկայացուց ինձ երկու երիտասարդի, երիտասարդաց միոյն անունն Լեոն, իսկ միւսինը Գարեգին է, Լեոն ուսաստանցի էր, որովհետև ուսաստանցի լեզու կը խօսէր, իսկ Գարեգին տաճկաստանցի էր. և իւր խոսակցութենէն կերեւէր թէ զաւառացի էր նա: Շաբաթ մը վերջը Գարեգին Գրիգոր Քրլըճեանի հետ մեր տունը եկաւ. Գարեգին քանի մը առաջարկութիւններ ըրաւ ինձ, Իսկիւտարի մէջ, հնչակեան քովի թէի անդամներ գտնելով, անոնց հրահանգներ տամ:

Հարց. — Այդ ուսաստանցի Լեոնը և Գարեգինը անպատճառ գտնելու էք. մէք իմացանք, որ Քէրէզիյէ փողոց ապարթմանի մէջ երկու անձինք կը բնակին, բայց երբ հարց ու փորձ ըրինք ասկից 10 օր առաջ, մեկնած են այդ տունէն, կրնա՞ք մեզի այդ Լեոնի և Գարեգինի քանի տարեկան և ի՞նչ ձև անձինք ըլլալին բացատրել:

Մամբ. — Լեոն 23-24 տարեկան, միջահասակ, նիհար, թխադէմ, մոխրագոյն գլխարկով, քիչ մօրուքով, սևազգեստ, երբեմն կապոյտ ակնոցներով և երբեմն առանց ակնոցի անձնաւորութիւն մըն է. իսկ Գարեգին կարճահասակ հազիւ քսան տարեկան, սևահեր, նոյնպէս մօրուսաւոր, գլուխը ֆէսով և բաց գոյն զգեստով նիհար անձ մըն է:

Հարց. — Լեոն և Գարեգին այն անունները իրենց իսկական անուններն են, թէ կեղծ անուն են:

Մամբ. — Այդ անուններուն կեղծ կամ իսկական ըլլալը չեմ գիտեր, միայն թէ այս անւամբ ինքզինքնին ներկայացուցած են ինձ, շատ հաւանական է, որ կեղծ ըլլայ:

Հարց. — Ատոնց մականունը ինչ է:

Մամբ. — Մականուննին յայտնի չեն ինձ, վասն զի պարզօրէն իրենց անունով միայն ներկայացան:

Հարց. — Ասոնց արհեստը ի՞նչ է:

Մամբ. — Լեոն արհեստը չունի կարծեմ. միայն «Հընչակի» կեդրոնէն մասնաւոր կերպիւ Պոլիս խրկած գործիչ մ'է, արհեստը յեղափոխական է. իսկ Գարեգինն ալ Լեոնի գործակատարը և կամ օգնականը լինելու էր, որովհետև երբ ուրբաթ առաւօտ մը Գարեգին Քրլըճեան Գրիգորի հետ մեր տունը եկան, Գարեգին ուսաստանցի Լեոնին կողմանէ լուրեր և հրա-

*) Մամբի վարդապետ — այս սուկալի անձնաւորութեան ըրած մասնութեանց շնորհիւ, Նիկողոս Պալպալեան եւ ուսանող Գրիգոր Քրլըճեան աքսորւած են Ա. ք. քիլիսի բերդ, իսկ դեղագործ Կարապետ Պասմաճեան 3 տարի բանտարկութեան դատապարտւած է:

հանգներ կուտար ինձ և անոր հրամանաւը կը խօսէր ինձ հետ:

Հարց.— Գարեգինի տւած հրահանգները և Ղևոնի կողմանէ բերած լուրերը ի՞նչ էին:

Մամբ.— Այդ հրահանգները հայ ժողովուրդը Օսմ կառավարութեան դէմ գրգռել, ժողովրդի բացարձակապէս բողոքել տալ ի գործ դրած անիրաւութեանց և հարստահարութեանց դէմ և կեդրոնէն առնւած հրահանգները առանց յապաղելու նոյնութեամբը կատարել: ահաւասիկ ասոնք են Գարեգինի ինձ տւած հրահանգները:

Հարց.— Իւսկիւտարի մէջ այս պաշտօնը ստաձնող ուրիշ ո՞րոնք կան:

Մամբ.— Իւսկիւտարի մէջ, ինչպէս որ ըսի, շատեր կան այդ ընկերութեան անդամակցողներ, բայց ես կրօնաւոր ըլլալու և միշտ ժողովրդի հետ զգաղելու պատճառաւ այս պաշտօնին զիս կոչեցին, կարծելով, թէ ես աւելի օգտակար կրնամ լինել:

Հարց.— Գուք Գուսմ. Գարուի դէպքէն վերջը Պոլսէն մեկներ էիք, ի՞նչ պատճառաւ գացիք:

Մամբ.— Պիտի բացատրեմ այժմ, թէ ի՞նչ նպատակաւ մեկնեցայ անկից.— Պոլսոյ հնչակեան ճիւղի պետերէն Մ... համոզեց զիս, որ Հայաստան երթամ և այնտեղի ժողովուրդը մշակելով, հնչակեան քովի թէի գաղափարները քարոզել, ես Տրապիզոնի ճանապարհաւ ուղղակի Բէյազիտ գացի, որովհետև այնտեղի ժողովուրդը ծանօթ է ինձ. մինչև Բէյազիտ մեծ դժուարութիւններով հասայ, որովհետև կառավարութիւնը խիստ ուշադրութիւն դարձուց իմ վրայ, և ամեն մէկ քայլս ծպտեալ ըտեսներ կը հետևէին ինձ և այնտեղի ոստիկանապետը գաղտնի կերպիւ քննութիւններ կը կատարէր իմ մասին. քանի մը հայեր լուր կուտան, թէ ես կասկածելի և վտանգաւոր անձ մըն եմ կառավարութեան համար, վերջապէս չի կրնալով երկար առեն մնալ այնտեղ և ոչ ոքի ալ իմ նպատակս առանց յայտնելու, 10 օր մնալէ յետոյ, մեկնեցայ անկից և ուղղակի Պոլիս եկայ:

Հարց.— Բայազիտի մէջ հնչակեաններէ որոնք կային, անշուշտ անոնց հետ տեսութիւն ըրիք ազգային գործերու վրայ:

Մամբ.— Բէյազիտի մէջ աս չափ միայն կարողացայ իմանալ, թէ այնտեղ գոյութիւն ունի ընկերութիւն մը, զոր կապած են եղեր Փորթուգալեանի հետ և իրենց յարաբերութիւնը ուղղակի անոր հետ է եղեր, ասոնց պետք տեղւոյն վարժարանի ուսուցիչ Յովակիմեան անուն անձ մը է. սա պատմեց ինձ, թէ ինքը կազմած է ընկերութիւն մը և Փորթուգալեանի հետ յարաբերութեան մէջ է և գործելու եղանակին վրայ անկէ հրահանգներ կստանայ, հար-

ցուցի Յովակիմեանին, թէ Բէյազիտէն մինչև Մարսելիա ի՞նչ կերպով կը թղթակցի և իր դրած նամակները վտանգի չեն ենթարկուիր. հետևեալ կերպիւ պատմեց ինձ. «Ասկից Պոլիս գացող ճամբորդներ ամեն շաբթու կը պատահին, Փորթուգալեանին դրած նամակս կը յանձնեմ ճամբորդաց միայն և նա նամակս կը տանի Պոլիս և կը յանձնէ ինձ ծանօթ բարեկամիս և նա ալ զատ պահարանով եւրոպական փոստի միջոցաւ կը խրկէ Փորթուգալեանի հասցէին, նոյնպէս Փորթուգալեանէն նամակիս պատասխանը կստանամ Պոլսէն հոս եկող ճամբորդի մը միջոցաւ ու այսպիսով անվտանգ կրնանք թղթակցել Եւրոպայի հետ:

Հարց.— Բէյազիտի ուսուցիչը անշուշտ Պոլսոյ բարեկամին անունը տւաւ ձեզ:

Մամբ.— Աւա՛ղ, որ հետաքրքիր չեղայ այստեղի իր ծանօթներուն անունները և բնակավայրը հարցնել: Եթէ մանրամասն տեղեկութիւններ կարենայի առնել, այժմ խոստովանելով՝ աւելի ծառայութիւն մը պիտի ընէի կառավարութեան, բայց դարձեալ կը խոստանամ, որ Բէյազիտ նամակ գրելով, դիւրաւ կարելի պիտի ըլլայ ձեռք բերել այստեղ գտնուող յեղափոխականաց անունները:

Հարց.— Ուրիշ ի՞նչ տեղեկութիւններ ունիք:

Մամբ.— Առ այժմ այսչափ են իմ բոլոր ունեցած տեղեկութիւններս, բայց դեռ շատ գաղտնիքներ կան երևան հանելու. բայց պէտք է որ գաղտնի կերպիւ աշխատել բոլոր յեղափոխականաց անունները ճշտօրէն գիտնալ և ըստ այնմ վարել:


Հարց.— Ստորագրեցէք:

Հայերէն ստորագրութիւն

Մամբէ վարդապետ Պէնյեան:

10 Սեպտեմբեր 1890 թ.

Մամբէ վարդապետ իր խոստովանութեան երկրորդ օրը փոխարէն իւր ծառայութեան հարիւր օսմ լիրա նէր ստացած է կայսերական պալատէն. նա իւր խոստացած ծառայութիւններն ալ կատարած է. բազմաթիւ հայերու ձեռքակալութեանց պատճառ ըլլալէ յետոյ Կ. Պոլսոյ Աշրքեան Խորէն պատրիարքի հալածանաց ենթարկելով, ստիպեալ թողած է իր վարդապետական տարազը և կարգալոյծ հոգակելով, պարզ աշխարհական մը եղած և շահատակութեան սկսած էր:



Ն Ա Մ Ա Կ Ե Ո Ջ Ղ Ա Տ Ի Ց

Պեոյիւք-Ձաթի և Տափուշ-պաշ գիւղին մէջ տեղ հանքէն վերադարձող 5-6 հայերու վրայ 8-10 թուր-

քեր յարձակելով, մէկը կսպանեն և երեքը կը վերա-
ւորեն: Կառավարութիւնը բացարձակ կերպով արգելած
է քրիստոնեաներուն զէնք կրելը, որով վերոյիշեալ
խեղճ հայերն անզէն և անձնապաշտպանութեան միջո-
ցէ զուրկ՝ մատնուած են սուլթանի կառավարութեան
բարբարոսութեան:

Օրեր առաջ լուր տարածուեցաւ, թէ թուրքերը ա-
ւազակային խուճեր կը պատրաստեն յատկապէս քրիս-
տոնեաները նեղելու և անոնց փասեռու դիտումով նա-
խապէս ոչ ոք կարևորութիւն տուաւ և հաւատաց այդ
լուրին, բայց վերոյիշեալ դէպքը կը հաստատէ անոր
իրաւացի ըլլալը:

Տօն օրերը մտեցած ըլլալով մեր մ ու լ ի թ ա ռ-
ն երը գնալով Մ ու Ն ա ս է պ է ճ ի է ֆ է ն տ ու մ օ տ, կը
խնդրեն՝ որ այդ տօնական օրերուն պահ մը դադրեցու-
նեն տուրքերու գանձումը, որպէս զի ժողովուրդը մի
քիչ խաղաղ սրտով իր հոգեկան և կրօնական պէտ-
քերը հոգայ, բայց եկնու տես, որ այդ Մ ու Ն ա ս է պ է-
ճին կը կատրի, կը փրփրի, և ոստիկաններու ու ժողո-
վուրդին ներկայութեանը սպառնալից կը գոռայ. «Եթէ
տուրք հաւաքելը դադրեցնէք օր մը, հրաման պիտի
տամ զօրքերուն, որ ձեր կրպակները և տուները աւա-
րի առնուն»:

Տօն, ի՞նչ նշանակութիւն ունի պաշտօնեայի առջև,
այն պաշտօնեայի, որ իր ֆանատիկոսութեան գագաթ-
նակէտն է հասած փձացնելու, ոչնչացնելու համար հայ
տարրը, որուն գերագոյն հաճոյքն է հայուն ամենէն
սիրական զգացումներուն մէջ վերաւորել, և անոր բո-
լոր ուրախութիւններն, հոգեկան թէ մարմնական, թու-
նաւորել:

Անցեալները բողոքականներու հոգիւ պատ. Յակոբ-
ջան Գապարձեան քաղաքէս քանի մը քայլ հեռի գե-
րեզմանոցի մը մէջ՝ լրագիր կարդացած ատեն, քանի մը
թուրք գիւղացիներ վրան կը յարձակին և «դուն կօ-
մ ի թ է ի թ ու ղ թ կը կարդաս» ըսելով, ծեծել կուզին
զայն: Գապարձեան կը փախի անոնց ձեռքէն և քա-
ղաք կապաստանի. թուրքերը ետևէն «հասէք կօմիթէն
կը փախի» պուռով, կը վազեն: Գապարձեան իր ան-
ցը խալսելու համար պահականոց մը կապաստանի և
եղելութիւնը կը պատմէ: Թուրքերուն հանած աղմուկին
վրայ, թուրք բազմութիւնը հետզհետէ կը շատանայ, և
զանի կապելու համար չլան կը փնտռին, բայց չեն
կրնար գտնել: Վերջապէս երկու զինուոր ձեռքերէն, եր-
կու հատ փիշերէն և հատ մը ալ օձիքէն բռնելով,
կը տանին. դէպի կառավարութեան պաշտօնատունը:
Ճանքան հարցունողներուն ալ կը պատասխանին՝ «կօ-
մ ի թ է ն եր ու Ն թ ու ղ թ տ աւ, միւս ընկերներ փախան,
ասիկայ միայն բռնեցինք»: Նախ կը ներկայացնեն հա-
զարապետին, վերջը կօմիսերին, վրան գլուխը լաւ մը
խուզարկելէ վերջ, կը գտնին Աւետաբեր լրագիր մը
և վաղուան համար ժողովարանին մէջ խօսելիք քարո-
զին օրինակը: Ասոնք էին փաստակար կարծուած կօմի-
թէի թուրքերը: Թէև անմիջապէս կը հասկացուի, որ
սխալմունք եղած է և մարդը անմեղ մ'է, բայց դար-
ձեալ չեն ուզեր ազատ արձակել և մուլթ բանտ մը

կը նետեն. մինչև որ դեղագործ Շիշմանեան էֆ. գա-
լով և երաշխաւոր ըլլալով արձակել կուտայ:

Գարձեալ նոյն օրը Գոլյուճի Արապկոսի Մանուկը
թօփճուցի թուրքէ մը 5-10 պաթման ալիւր կառնէ իր
մէկ բարեկամին համար, և որովհետև այդ թուրքէն
երկու տարւան պահանջք մը ունէր, կուզէ արժէքէն
իր պահանջքը վար դնել: Թուրքը կրնդ դիմանայ և ստա-
կը ամբողջ կը պահանջէ, հայն ալ իր իրաւունքը կը
պահանջէ. վերջապէս թուրքը չը համոզուելով, կը դիմէ
չարշը-աղասիին, սա թէև հայուն իրաւասի ըլլան
կը հասնայ, բայց աս ալ մէկից կը ստիպէ, որ ստա-
կը ամբողջ վճարէ: Մանուկի սոյն յանգանութեան վրայ
չարշը-աղասըն կատրած ձեռքի փայտով կսկսի զարնել
հայուն: Աւերջապէս խնդիրը կը ներկայացուի աւելի մե-
ծերուն՝ Պէյէտէյի նախագահը կը վճուէ.—

«Չորպաճը, դուն հիմայ ալիւրին փարան ամբողջ
տուր և յետոյ գնա պահանջքիդ համար ալ բողոք
տուր»:

Ստակը ամբողջ տալէն զատ, Մանուկ 25 զրուշ ալ
տուգանք կուտայ չարշը-աղասըին ընդդիմացած ըլ-
լալուն համար:

Պահանջքդ մի գանձեր, ծեծ կեր, և տուգանք տուր,
ծեծ ուտելուդ համար.— ահա հայուն բաժինը այս հա-
միդական վայրագ դարուն մէջ, դար մը, որ կը գերա-
զանցի իր բարբարոսութիւններովը յազկերտական,
տուղրելական, սալաթոնական, և թէմուրական շրջան-
ները: Խեղճ հայ, որչափ ալ սև էր քո ձակտիդ գիրը:

Յոյներն ալ իրենց բաժինը կառնին այս վայրենու-
թենէն: Ղաճառական մը է մ լ ա ք-Մ է մ ու ռ ի Հ ա ֆ ը ղ
էֆ-ի տղէն շահանջք կուենայ. քանի մը անգամ ա-
նուշուութեամբ կը պահանջէ, բայց չը կրնար գանձել:
Օր մը, ճարահատած, «ամօթ է պարտքդ տուր» կըսէ.
ան ալ՝ «առ քեզի փարա» ըսելով, ձեռքի խոշոր գաւա-
զանով կսկսի ուժով, ուժով խփել խեղճ յոյնի գլխուն
և զանի արիւնլայ կը ձգէ գետին:

Յոյները սովորութիւն ունին ամեն տարի տօներին
եկեղեցւոյ թաղը հրացան կը պարպեն: Թափշուր-ա-
ղասը՝ Գարաճապէյ, յունաց քահանային քաղաքավա-
րութեամբ մը կիմացունէ, որ անտեղութիւն մը կը պա-
տահի: Շիշման Էօրդանի եղբորը կրպակին մէջ երբ
Գարաճապէյին քաղաքավար ընթացքին վրայ կը խօ-
սին Մեծ-մզկիթի մօտերը, գրավաճառութիւն ընող
թուրք մը վրայ կը հասնի և երբ Գարաճապէյին այն
կերպով լուր տալը կիմանայ՝ «վայ, աս ի՞նչ ըսել է,
Գարապէյ սև գլուխի մը առջև խոնարհի», և կսկսի
բարկանալ ու քրիստոնէի կրօնին հայհոյել: Իր կանչ
ու կականի վրայ կրպակին առջև բազմութիւն մը կը
խուսի. թուրքերը կը ձայնակցին քրավաճառին և երբ
գրգիռն ծայրայեղութեան հասնելով՝ կը վախեցուէր ա-
րիւնալի կուսէ, զօրքերը գալով ամբողջ կը ցրէին: Սա-
կայն առանց պատճառը փնտրելու, յանցաւորը գտնե-
լու և պատժելու:

Թւականէս երեք օր առաջ, Յունիս 16-ին, ուրբաթ
օրը, Բօյրալըր գիւղի շէրքէգները ձիւմա նամազը
(ուրբաթի աղօթք) ելլալէ վերջ, երկու հարիւրի-

չափ ձիաւոր և հետեակ անձեր երկու ժամ հեռաւորութեամբ Էյլէնձէ անունով հայ գիւղի մը վրայ կը յարձակին: Շաբաթ օր լուսն իսկ, որ հայերէն 5 մարդ մեռած և 25-30 վիրաւոր կայ: Թափուր աղասըն և Գարաձա-պէյ 14 ձիաւորով Էյլէնձէ գիւղ գնացին. այս գիշեր ալ Մուսալին-պէյն և բժիշկ Օհան էֆէն-տին. անոնց տեղեկութեանց նայելով, վիրաւորներէն շատերն ալ ողջ չեն մնար:

— Անցեալ շաբաթ իրկուն Ինձիրլի գիւղէն երեք վիրաւոր մարդեր եկան: Մէկ ժամ հեռաւորութիւնով դանւած Լէօք անունով թուրք գիւղէն, Հաճի Թօրուն անունով թուրք մը 15-20 մարդով այս երեք հայերուն վրայ յարձակելով՝ չարաչար կերպով կը ծեծեն և կը վիրաւորեն զանոնց:

— Թւականէս: 15 օր առաջ, Ագդազ Մատենէ երկու ժամ հեռաւորութեամբ գեղ մը, կեսարացի Իւսուֆեան Տիգրան, Միհրան և Յակոբ անունով երեք հայ վաճառականներու առջև չէրքէզներ ելնելով, երեքն ալ կը զարնեն: Տիգրան և Յակոբ վայրկեանապէս կը մեռնին, իսկ Միհրան ծանրապէս կը վիրաւորի անոյս վեճակի մէջ. իր տեղեկատուութեան մէջ կը յայտնէ, թէ 5 չէրքէզներէն երկուքը կը ճանչնայ. բայց կառավարութիւնը բնաւ չի հետաքրքրուիր:

— Թւականէս ամիս մը առաջ, Մուճուսունցի Արապետ անունով վաճառական մը սպանւեցաւ երկու քուրդերու ձեռքով, որոնք դրդւած էին Պոյալը գիւղէն Մուստափա-պէյ օղլու Ահմէտէ և Հիւսէյին պէյէ: Քուրդերը առաւանց կանուխ սենեակը մտնելով, չաւնով մը կը խեղդին և պահանակոցին մօտ տեղ մը ձգելով, քարերով կը ժաժկեն: Մարմինը վերջը դանւեց, և թէև կառավարութիւնը ամէն բան գիտէ, բայց ոճրագործները փնտրելու և պատժելու ո և է ձեռնարկ մը չըրաւ:

Այս միջոցիս դէպքերը պակաս չեն, հոս ալ այլ ևս կարելի չէ դիմանալ թուրքերուն տւած թշնամանքէն: Միշտ հայհոյութիւններ, կռիւներ անպակաս են. երբ հայ մը իրաւունքը իր կողմը ունենալով՝ երթայ բողբոջու կառավարութեան, հոն լաւ մը կը դիմեն զինքը և կը ստիպեն՝ որ «դատ չունենմ» ըսէ, և այսպէսով կը քանդուին, այս եթէ շարունակելի մեծագոյն աղէտներ կը յուսացուին:

ՆԱՄԱԿ ՍԵՒԱՍՏԻԱՅԻՑ

Ալաքիլիսէ կը գտնուի Սեբաստոյ արևելեան կողմը 15 ժամ հեռաւորութեամբ, զուտ հայաբնակ 120 տունէ բաղկացեալ, ժողովուրդը երկրագործութեամբ և հովուութեամբ կը բաղուի, բայց այսու հանդերձ խիստ թշուառութեան, աղքատութեան մէջ կը տառապի բազմաթիւ երիտասարդներ աստ և անդ կը պանդխտին՝

ճնշած կաշառակերներու, թուրք հարկահաւաքիչներու և զաֆթիաներու լուծին տակ, նամանաւանդ բուրդ մօլլա Խալիլի և թուրք Վահիպ աղաներուն:

Գիւղէն գրեթէ մէկ ժամ հեռաւորութեամբ, 2իթխան Գրզլ Երմագ գետին եզերքը, շատոնց ի վեր արդէն ալաքիլիսացոց կը պատկանէր և իրենց սեփական հողն էր. սակայն տասն և եօթը տարիէ ի վեր մօլլա Խալիլ ըսած քուրդը բռնի տէր դարձած՝ իր սեփական հողը ըրած էր և միշտ գեղացոց մեծ վնաս կը հասցնէ. այդ դատը 17 տարիէ ի վեր կը վարուի, սակայն դատարանը կը կաշառուի միշտ և իրաւունքը քուրդին կը մնայ: Ի՞նչ ընէ խեղճ գիւղացին, որու դիմէ, կառավարութիւնը կաշառած՝ չուզէր իր իրաւունքը ճանչնալ: Այդ 17 տարւան միջոցին մօտ 1000 կամ 1500 ոսկի ծախս եղած է, բայց դարձեալ անօգուտ: Հինգ տարի առաջ ալ գիւղացիք բռնի կերթան, կը քակեն բոլոր այն շինութիւնները, զոր կառուցած էր 2իթ խանի վրայ: Մօլլա Խալիլ խմանալով այս դուժը, անմիջապէս 300 մարդ կը ղրկէ, բայց գիւղացիք արդէն հեռացած էին: Սակայն նոյն գիշերը 300 նորէն աւելցնելով, ամբողջ խանը վերստին կը շինէ: Շէքը կառուցեցաւ, բայց վրէժը սրտին մէջը անմոռանալի մնաց... Անցած աշուն, գիւղին սովորութեան համեմատ, խուճ մը հայ աղիկներ և կիներ կաւր կերթան: Յիշեալ քուրդին թելադրութեամբ մէկ քանի քուրդեր ճամբան վրանին յարձակելով, կուզեն պատիւին բռնաբարել, բայց կիները առնական դիւցազնութեամբ մահը աւելի կը նախընտրեն, քան թէ անպատուիլ: Միայն քուրդերը կը յաջողին մէկ հարս և երկու աղիկ մերկացնել, բայց դարձեալ չեն յաջողեր անպատուել:

Վահիպ աղա ըսած թիւրքն ալ նոյն գիւղէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ Պօսխուլթ ըսած գիւղը կը բնակի: Վահիպ աղան պաշտօնեաների կաշառակեր սովորութեամբ, գիւղացիներէն 30 ոսկի կը պահանջէ, ըսելով՝ թէ խանին խնդրին առթիւ 10 կամ 12 հոգի, որ բանտարկւած էին, ինձ իր անձնական գանձէն 30 ոսկի վճարելով, ազատ ձգել տւեր է: Հետեւաբար գիւղացիք այդ պարագային ոչ բոլորովին ճարահատ կը դիմեն Վարդանեան Միհրան էֆէնդիին, մէկ ամսւան համար 30 ոսկույ փոխարէն 60 ոսկի վճարելու պայմանաւ... Ահա միջոցները հայ վաշխառուներուն աղքատ հայ գիւղացիէն ստակ կորզելու համար: Վարդանեանը դրամը գանձելու համար, Պոլիս պոլիկա կընէ, բայց Պոլիս չը վճարուիր. այն ատեն գիւղը ոստիկան կը ղրկէ ու կարողէն ու անկարողէն անխղճաբար կը գանձէն 60-էն ալ շատ աւելի:

Վաշխառութեան մասին Վարդանեանը կը գերազանց Սեբաստոյ դաւառին մէջ ծանօթ հայ վաճառական Պոյաճեան Գալուստ աղան:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր .

Ս Ղ Ե Ր Տ Ի

I

Տաճիկ կառավարութեան և քիւրդերու ձեռամբ Հայաստանի մէջ գործած բարբարոսութեանց անմասն չէ մնացեր և Սղերտը, որու մասին դժբախտաբար ցարդ ոչինչ չը հրատարակեցաւ մամուլին մէջ, մինչդեռ հոս շատ ծանրակշիռ դէպքեր եղեր են և կըլլան հիմա: Սղերտը կը դանւի Բաղէշի կուսակալութեան մէջ, դէպի հարաւ մէկ ու կէս օր հեռու Բաղէշէն և 8 ժամ հեռու Սասնոյ լեռներէն: Մինչ Բաղէշի և Սասնոյ մէջ արիւնայեղ կռիւներ և անասելի բարբարոսութիւններ կը ծագին, մի՞թէ Սղերտը, որ այդքան մօտ է անոնց, անմասն մնացեր է այդ խժդժութեանց: Ո՛չ Սղերտի 10,000 բնակչաց մեծագոյն մասը տաճիկ է, վաշխառու, հարստահարող, իսկ մնացեալ փոքր մասը հայ և ասորի, բոլորը արաբերէն կը խօսին: Հայոց հայ ըլլալուն նշանը իրենց եկեղեցին է, սովորութիւնները, հանդէսները և տաճկաց նկատմամբ ունեցած ատելութիւնը: Հոս պէտք է ըսել, որ տաճիկներու մեծ մասը հայ են եղեր ժամանակաւ: Սղերտը շրջապատուած է շատ մը գիւղերով, որոնք գրեթէ, քիչ բացառութեամբ, հայաբնակ են կամ եղեր են և նեղութեանց չբխմանալով ասդին անդին ցրւեր են, մասամբ ալ տաճկացեր են Խարզան գաւառը, Բշերիք հայաբնակ են մեծ մասամբ, Հազոյ, Տէհ, Ռնտլան գիւղերը և այն բոլորը հայաբնակ են. մէջերնին ցրւած են վայրենի քրդերը, որոնք միանալով տաճիկ վայրենի կառավարութեան հետ, ամեն նեղութիւն և տառապանք հասուցած են ժողովրդին:

Անցեալները պատահած անհամար դէպքերէն քանի մը հատը հոս արձանագրենք, խոստանալով պարբերաբար տեղի ունեցած դէպքերն ալ հաղորդել:

1890 թ. Էրզրումի նշանաւոր դէպքին օրը Սղերտի տաճիկ մեծաւորները՝ Հաճի Ապտէ Մոյսալի, Ստատ Ապտալա, Իսա-ըդէ-Համմատ-ըլ-Հաճճի, Համրտ աղա, շէյխ Խաթիպ, շէյխ Մըհամմատ և որդիք, հին մուֆթին, հաճի Մահմուդ ամմըքէ և այլն ժողով ըրին մեծ մղկիթին մէջ (որ երբեմն հայոց 40 մանկանց մեծ եկեղեցին էր), և հանրագիր—մազալաթա մը կազմեցին, ստորագրեցին ու փաշային տւին: Հանրագրի զօրութեամբ տաճիկները հայոց վրայ պիտի յարձակէին և կոտորէին, բայց փաշան չընդունեց. այն ժամանակ ատոնք քարկացան և հրամայեցին, որ ոչ մի տաճիկ հայու հետ չխօսէ, խօսողը կը բանտարկուի և տուգանքի կենթարկուի. արկից զատ ըսին թէ փաշան հայ է, և նոր հանրագիր մըն ալ կազմեցին, որ փաշային պաշ-

տօնանկ ընել տան, բայց չկրցին. շուտով փաշան փոխեցաւ Պաղտատ: Սակայն հակառակի պէս գործը կանգ առաւ քաղաքին մէջ, միայն երբ տաճիկ մեծաւորներուն այդ ըրածին լուրը հասաւ գիւղերը, քուրդ զօրքերը—Համիդէ և աշիրէթները յարձակեցան հայոց վրայ: Շատ մը հայ աղիկներ, հարսեր կը բռնէին կը տանէին զիւանցի շէյխ Մէհմմէտին, որ մահաբազան կը դարձնէր և իրաւունք կուտար ամուսնանալու, եղները, գոմէշները կը գողնային և իրանց արտերը կը մշակէին. հայերը մեծ նեղութեան մէջ էին, գիշեր ցերեկ կը տանջէին: Քուրդերը անոնց ոչխարները, ցորենը կողոպուտ ըրին և փախցուցին, հազու Սղերտի տէր Եղիշէն 10 ձիաւոր զինուորներով կրցան անոնց ետևէն երթալ, կողոպուտը աւանել և տէրերուն յանձնել, բայց քուրդերը զղջացին թալանը տալուն համար և յարձակեցան տէր Եղիշէի ու ձիաւորներուն վրայ, կատաղի հրացանաձգութիւն կըլլայ, բայց մահ չի պատահիր, տէրհայրը վախէն 5-6 ամիս հիւանդացաւ և չէր կրնար խօսել:

Անցեալ տարի բարիկենդանին տաճիկներուն մէջ տարածուեցաւ թէ տեղիս վարժարանի ուսուցիչ Վարապետ էֆ. զինուորական վարժութիւններ կը սովորեցնէ վարժարանին մէջ և թէ արգելած գրքեր ունի: Անմիջապէս տէրութեան կողմանէ զինուորներ և քննիչներ կը դիմեն վարժարան, տակն ու վրայ կընեն վարժարանը, եկեղեցին ու Վարապետ էֆ.-ի տունը. կը բռնեն Վարապետ էֆ. և կուզեն կախել, ըստ պահանջման տաճիկ ամբոխին, որը լեցւեր էր եկեղեցին ու վարժարանը և հայոց հաւատքին, ազգին հայհոյանքներ կուտար, կը դարնէր, կը տանջէր, կը չարչարէր, ջուրի գացող կանայքը կը բռնէին, կուտերը կը կոտորէին, և կը լլկէին: Այդպէս եկող մը—Գաբո անունով, բռնեցին, կռնակը բռն մը փայտ կար, գետին զարկին բռնի տակը, ոտքերով կոխկոտեցին, քարեր լեցուցին վրան և, եթէ զինուորները շուտով վրայ չհասնէին շնչահեղձ պիտի ըլլար Գաբոն, Վարապետ էֆէնդին բանտարկեցին, բայց ոչ անոր քովը, ոչ եկեղեցին և ոչ վարժարանը բան մը գտան. 8 օրէն ետք փաշան արձակեց զինքը:

Տաճիկ տղայքը կը բռնեն ծխախոտի ըէժիի հայ պաշտօնեայի տղան և կուզեն բռնաբարիկ զինքը. տղան կը պոռայ, հայրը օգնութեան կուգայ, տաճիկ տղաները կը ծեծէ. տղայոց հայրերը կուգան, կը բռնին հայուն և լաւ մը կը ծեծեն. «հայր ի՞նչ իրաւունքով տաճիկին կը ծեծէ», կըսէն և տէրութիւնն ալ կը բանտարկէ մարդը: 6-7 ամիս բանտը կը մնայ, ըէժիի վարչութիւնը ամսականը կը կտորէ և միայն հայերը անոր ու ընտանիքին համար եկեղեցիցն մէջ ժողովարարութիւն մը ըրին:

Անցեալ տարի Զատիկին օրը, երբ ամեն տեղ ուրախութիւն կրնէին, սղերտցի հայերը մեռել կը թաղէին: Որպէս թէ ժողովորդին հանդարտութեան համար քաղաքին մէջ պահապան զօրքեր կը պատէին, երեկոյեան ժամերգութեան ատեն զինւորներէն 12 հոգի եկեղեցի եկան. ադոնցմէ երկուքը, որ սղերտցի չէին և արաբերէն չգիտէին, մտան հայոց եկեղեցին, դուրսը մնացող զինւորները կայներ էին և ամեն տեսակ լըբութիւններ կրնէին: Այդ ատեն Ատրմո անունով հայ մը՝ գինով, եկեղեցի կուգայ, և կը տեսնէ, որ դուրսի զինւորներէն մէկը հայ կին մը բռներ է, բայց չկրցաւ բան մը ըսել. և երբ եկեղեցի մտած ատեն, տեսաւ երկու զինւորներն ալ, բարկացաւ, կատաղեցաւ և ըսաւ՝ «աս ի՞նչ բան է, մենք տէր չունինք, իշխան չունինք, այս ի՞նչ դրուածիւն է, դուրսը մեր կանայքը կը բռնաբարեն, ներսը մեր եկեղեցին կը պղծեն»:

Մի երկու մարդ լուեցուցին Ատրմոն և դուրս հանեցին. ներսի երկու զինւորներն ալ դուրս ելան, անմիջապէս յարձակեցան Ատրմոյի վրայ, անոր գլխարկի թաշկինակները քաշեցին ու վզէն անցուցին, որ խեղդեն, ծեծեցին, ինքն ալ անոնց ծեծեց, հայերը մէջ մտան, ազատեցին Ատրմոյին, բայց զինւորները զինւորական փողը հնչեցին: Ագոր վրայ քաղաքը տակն ու վրայ կը լլայ. ինչքան զինւոր և ինչքան տաճիկ որ կար, բոլորն ալ կը դիմեն հայոց եկեղեցին. հայերը եկեղեցիին մէջ մնացին, եկեղեցին չորս կողմէն շրջապատեցաւ, չէին թողներ, որ հայ մը եկեղեցին դուրս ելնէր: Տաճիկները ձգեցին իրենց խանութները և եկան հայոց վրայ, որ թալանեն, ձեռքերը ընկած հայը կը ծեծէին, կը տանջէին: Զինւորները իրենց սովորութեանը հաւատարիմ մնալով՝ կանայքը կը լլկէին, գեղեցիկ տղայքը կը բռնէին, շղթաներ, ժամացոյցներ, գեղեցիկ հագուստներ, լաւ գօտիներ, որ հագեր էին Զատիկի առթիւ, բոլորը կը գողնան, կանանց զարդերը կառնին: Կին մը անմիջապէս վախէն կը վիժէ, շատ կանայք ուշաթափ կը լլան: Սուսանէ Մուսայեան, Համամէ Պետրոսեան, Զըմրուտ Հաշտեան կը մեռնին վախէն, Մինաս անուն տղայ մը փրկուող եղբայրը կը բռնէ և կուզէ ջրհորը նետուիլ անոր հետ միասին, նոյնպէս Մեղքոն անուն տղայ մը կուզէ ինքզինքը ջրհորը նետել, բայց չեն թողներ, և ուրիշ քանի մը տղայոց հետ ծինելոյց կը բարձրանայ, ուր կը մնան մինչև կէս գիշեր: Փոքրիկ հայ տղայ մը բռնեցին դուրսը և խենջարով երկու կտոր պիտի ընէին, եթէ թուրք կին մը չազատէր, երկու մարդ բռնեցին՝ Պետրոս և Գրգէ անուն և կուզէին խենջարով զարնել, բայց սոքա մեծ ճարպիկութեամբ ազատեցան, և այլն և այլն, որը ըսեմ և ո՞րը թողնեմ, հապա այն յուսահատութիւնը, այն երկիւղը, որ համակեր էր ամբողջ հայոց հոգին, այն աղաղակն ու վայնասունը, այն ճիգերն ու ողբերը, որ հայ կանայք կարձակէին եկեղեցիին մէջ բանտարկած, ամեն հայ իր մասը աչքին առջև կը տեսնէր, պաղ քրտինք մը կանցնէր ամենուն ճակտին և ընելիքն չգիտէին: Զինւորները ձերբակալեցին հետևեալ անձերը—որպէս ագրին գլխաւորներ և խռովութեան պատճառ երողներ—

Մ. Օհան, Կարապետ Պողոսեան, Ատրմո Սարգիսեան, ոսկերիչ Իսայ, Մուսայ Մ. Հանոյեան, Ասհատ Մուրաթեան, Օմանսօր Իսայեան և տարին զօրանոցը: Այն ատեն Համէ անուն տաճիկ մը եկաւ, որ բաւականին բարի մարդ մըն է, «պալատիէի ըէսը», ու տեսաւ, որ քանի մը տաճիկ չլանները առած զանգակատունը բարձրացել են և զանգակը վայր նետել կուզեն, բարկացաւ անոնց վրայ, հրամայեց վար իջնել, զինւորներուն հարցուց աղէտքի պատճառը, ցրեց բոլորը և փողահարն ալ բանտարկել տուաւ: Հիմա միայն հայերը դուրս ելան եկեղեցիէն և վազեցին իրենց աները, որ չգիտենք ինչո՞ւ չեն թարկեցան տաճկաց յարձակման: Արդէն գիշեր էր, տաճիկները տակաւին կատողած, փողոցները կը պտտէին և հայոց ագրը, հաւատը, պաշտպան եղողը, կը հայհոյէին, հայերը կը բռնէին ու կը տանջէին:

ԱՊՍՏՄԲՐՈՒԹԻՒՆ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

Ընկերներ,

Մեր շարժման ընթացքը անյաջողութիւնների պատահելը ինձ ստիպեցին առ ժամանակ ձեզ ոչինչ չհարդարել. և այսօր սրտիցս կը գրեմ, իմացած կը լինէք օտար թերթերից, բոլորովին անյաջողութիւն ունեցանք. հենց այս պատճառով այլ ևս ձեզ չեմ գրիլ օրագրական ձեռով այլ մատնացոյց լինելով անյաջողութիւնների պատճառների վրայ, եղելութիւնը կը յայտնեմ մի քանի բառերով ի գիտութիւն «Դրօշակի» ընթերցողներին:

Թէ ինչո՞ւ մարեցաւ այդ պատասխանութիւնը, կամ, աւելի ճիշտն ասած, ինչո՞ւ կանգ առաւ գրեթէ գործի սկզբում, պատճառները շատ են. գլխաւորը այդ բոլորարական և բուսական կառավարութիւններն էին, որ ամեն ջանք թափեցին խանգարելու և մեղցնելու պատասխանութիւնը. այդ կառավարութիւններից մանաւանդ բոլորարականը ոչ մի միջոց չխնայեց իր սյր նը պատակին հասնելու համար. նա տանեակներով հարկներով բանտարկած վերադարձում էր մակեդոնական սահմաններից այն բոլորացիներին, որոնք ցանկանում էին անցնել կուբուլ սուլթանական լծի տակ հեծող իրենց հարստահարած եղբայրների ազատութեան համար: Միւս գլխաւոր պատճառը մակեդոնական պարստամբութեան դադարման դա իր բուն ժողովորդի անպատրաստ լինելն էր: Մի տարի է միայն, որ մակեդոնական գլխաւոր Յեղափոխական Կոմիտէն սկսել էր իր եռանդուն պրօպագանդան և ժողովորդին զինելը. ի՞նչ կարելի էր անել մի տարւայ ընթացքում: Ի հարկէ, ոչինչ: Այդ շատ լաւ գիտէր Գլխաւոր Կոմիտէն և նա՛ չէր, որ այդպէս վաղաժամ բարձրացրեց պատասխանութեան դրօշակը, այլ սահմանի մօտ գտնուող մի այլ կոմիտէ, որը օգտուելով Հայկական հարցի բորբոքելուց, կամեցաւ Մակեդոնական հարցը ևս բարձրացնել:

Ահա գլխաւոր պատճառները, որոնք առիթ եղան մակեդոնական ապստամբութեան առ ժամանակեայ դարման:

Բայց չնայելով այս անյաջող պայմաններին, մեր յեղափոխականները տւին դարձեալ մի շարք կռիւններ՝ Բաղլոզ նահանգում, Նէւրոկոս, Մալէշէսկո, Պիանիչկո և Պէշէէո քաղաքների, Վիքչէ, Մալէշու և Բէզգաշէէո գիւղերի մօտ և այլ շատ տեղերում: Այս վերջին գիւղերը զոհ եղան Տրդեհի, որ գցել էին տաճիկ զինւորները...

Բայց մենք չենք յուսահատուում, յետ չենք նահանջում, սկսածը կը շարունակենք: Օգտուելով անցեալի անյաջողութիւնից, գործած սխալներից և ձեռք ձեռքի տւած մեր վիճակից հայ եղբայրների հետ, առաջ կը տանենք յեղափոխական գործը աւելի մեծ եռանդով:

Սասունի Ապստամբութեան և Կոտորածի Տարեդարձը Օգոստոսի 13-ին տօնել է ուր որ հայեր կան: Հենց առաջի անգամից այս օրւայ մեծ ժողովրդականութիւն ստանալը մի զօրեղ ապացոյց է, որ այդ արիւննալից անցքը թողել է իւր հետքը ժողովրդի կեանքում, որ ժողովուրդը զգում է թէ ապրում է մի պատմական ըրպէս, որը թողնելու է իւր ակօսը նրա ամբողջ էութեան, կազմի վրայ: Նա գնահատում է այդ գիտակցութեան նշան է և պէտք է յուսալ, որ եկող տարիներին մեր յեղափոխական գործիչները կիմանան աւելի ըստ արժանոյս յիշատակել և յիշեցնել... ու օգտուել այդ գիտակցութիւնից: Մենք չենք կասկածում մի ըրպէ, որ այդ օրը կը յիշուի և Սեպուհ լեռը ու Կամախը. Սասուն-Կամախ, ահա մեր նոր կեանքի կարպետները. սրանք են մեզ փրկողները, երախտագէտ լինինք, յիշենք ու դրանց յիշատակը վառ պահենք, աշխատելով միշտ դրանց նահատակների վրէժը առնել, բազմացնելով մարտիչների թիւը: Եւ այդ մեզ կը յաջողի: Մենք դրա համար գրաւական ունինք, որովհետեւ, ինչպէս ասացինք, հենց առաջի անգամը, նա ամենամեծ ժողովրդականութիւն ստացաւ այդ օրը տօնած է բացի այն տեղերից, որ մենք յիշատակել ենք Մէ 12-ի մէջ և՛ Տաճկահայաստանում, ուստի հայերում, Բոլգարիայում և այն գլխաւոր տեղերում, ուր հայեր կան. տօնել է և Ամերիկայում, միայն տարբեր տարբեր ժամանակամիջոցներում...


ԼՈՒՐԵՐ ՇԱՏԱՆԻՑ

Յունիս ամսի մէջ, Անգղիական հիւպատոսը պաղտի ելաւ հարաւակողմի գաւառները, իւր աչքով տեսնելու պատմած թշուառութիւնները և ժողովրդի խեղճ կեանքը: Այցելեց Աղթամարի կաթողիկոսին, և անկէ անցաւ Շատախ և Կորդուզ: Շատ դժուարութիւններ քաշած էր Շատախի գիւղեր պտտած առնն, քանի մը տեղ ձիով միասին վար գլորւած էր լեռնէն: Նորդուզի մէջ կը հանդիպի աւագակապետ Շաքիրին,

որ կելնէ հիւպատոսի քէֆը հարցնելու իր արքանակներով: Հիւպատոսի ճամբան կը կտրէ և կըսկսի սպանական հարցումներ, բարեբաղդարար զապթիաներ կը լինին հիւպատոսի հետը և կը հասկացնեն Շաքիրին, որ նա հայ է:

Շատ տխուր տպաւորութիւն թողած էր հիւպատոսի վրայ այդ լեռնային երկիրը, քանի մը տեղ լացած էր ժողովրդի թշուառ վիճակին վրայ, և երկու տոպրակ կորնկանի (խոտ) հաց բերած էր հետ: «Լսածներէս շատ անելի սոսկալին տեսայ աչքովս», խօսած է ինքը: Նա ալ համոզւած է, որ վաղ թէ անագան Շատախն ալ Սասունի վիճակը պիտի ունենայ, եթէ զօրաւոր միջոցներ ձեռք չառնուին:

— Ժողովրդի միամիտ դասակարգը բաւական ուրախացած է բանտարկեալներու ազատութիւնը տեսնելով. նա չգիտէ ինչեր թագնւած կան այդ ըրպէական ուրախութեան մէջ: Տաճիկ կառավարութիւնը սովորած է այդ միջոցով խափել միամիտ ժողովրդին և... Եւրոպային տասն և եօթ տարիներէ վեր: Իւր «հայրական ողորմածութիւն» շատ անգամ սիրած է մեր վրայ հարեմի պետը, չարութիւններու ծնողը, ու ամեն անգամ նոր նոր թշուառութեանց հեղեղները զմեզ իրենց մէջ կը լած են: Սպասենք այս անգամ ալ, բայց քիչ մը արթնան աչքով: Այսչափ խափեցին ալ բաւական համարինք:



ՆՆՈՍՏԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԾՈՌՑԱԿ

Հայ Յեղ. Կեդրոն. սնդուկի մէջ ստացւեցան. Կալիպթայէն Ռոստոմ Շաւարշէն 460 ֆր., Աղթոռդէ մը 30 օսմ. ոսկի, Բաղդատեանէն 50 օսմ. ոսկի, Պօա 50 օսմ. ոսկի, Վեհանձն 100 օսմ. ոսկի:

Արշակաւան քաղ. Կեդր. Կօմիտէի սնդուկի մէջ ըստացւեցան.

- Պիծակ խ. 82 դահեկան, Կաւիճ 256 դհ., Մեղրիկ 20 դհ. ևս 75 դհ., Թնդանօթ 120 դհ., Ազատական 95 դհ., Բաղուկ 50 դհ., Արտագին 80 դհ. ևս 40 դհ., Աբատեան խ. 30 դհ., Ամբ 30 դհ., Սասուն 35 դհ., Զուլթա 5 դհ., Հրահայր 55 դհ., Գ. Կ. 20 դհ., Մամիկոնեան 40 դհ., Բաֆֆի 80 դհ., Անդղ խ. 80 դհ., Զրահ խ. 20 դհ. Զարեհ 15 դհ., Օտար մը 20 դհ., Մենտոր 20 դհ., Շուշան 20 դհ., Մասիս 40 դհ., Լուսնթագ 20 դհ., Օր. Հայրենասէր 20 դհ., Ա Գ. 20 դհ., Գրգօ 20 դհ., Հրազէն 170 դհ., Սիսակ 119 դհ., (նախկին 12 թւի մէջ պիտիմամբ 45 էր):

Շվ. Ժ. ք. Ա. 10 ֆր., Թ. 15 ֆր.:

Մեր կօմիտէների, ճանօթների և ընդհանրապէս մեզ դիմողների առանձին ուշադրութիւնն ենք հրաւիրում նոր հացէի վրայ:

Դաշնակցութեան անձնօթներից խնդրում է թղթակցութեան և ներքառութեան համար դիմել:

Gaspar, poste restante, Carouge (Suisse).
L. Boole, 15, Augustus, Bd. Hammersmith, W. London.
Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան

ԴՐՈՇՆԿ

Հ.Յ.Պ. ՔԻՐՐՈՅԷ
ՊՐԻՆՏԻՍԵՆ
A. R. F. BUREAU
LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՆՈՐ ՍԱՐՍԱՓՆԵՐ

ԵՐԶՆԿԱՅ ԵՒ ՊՈԼԻՒՍ

Սարսափ սարսափի ետևից, կոտորած կոտորածի ետևից է, որ անում է սուլթանի կառավարութիւնը անխնայ կերպով. մորթում, սպանում են և սպանած դիակը ենթարկում տանջանքների. ահա թէ ուր է հասել սուլթանական կառավարութեան պատրաստած մուսուլման ամբոխի մոլեռանդութիւնը: Սուլթանի կառավարութիւնը մի ընդհանուր կանգ չէ առնում, նա ամենայն եռանդով շարունակում է իւր խժոճութիւնները.—

Ահա երկու ամիս է և դեռ Երզնկայի գաւառը ամբողջովին գտնուում է պաշարման դրութեան մէջ, ահա երկու ամիս է, Վամախի սարսափը շարունակաբար տևում է անարգել կերպով.—զօրքը ցրած է ամեն կողմ, ամեն գիւղ, ամեն անկիւն այրում-կոտորում են, աւերում-բռնաբարում են, ոչնչից ոչինչ չէ խնայում:

Վամախը ձեռքից գնում է, որբանում է, զրկում իւր բնակիչներից և այդ անողը ոչ թէ համաձարակը, սովը ու գաղթականութիւնն է, այլ սուլթանի կառավարութեան սուրբ ու հուրը:—Գիւղեր են թալանում ու այրում, կանայք ու աղջիկներ են լլկում, մանուկներ են ենթարկում ամենագարշելի գործողութիւնների: Նոյնն է կատարում և Քամզարայում:

Եւ դեռ չգաղարած Վամախի, Քամզարայի սարսափները, այժմ էլ մենք ունինք մի երրորդը՝ Պոլսինը:

Պոլսիւր՝ օսմանեան պետութեան մայրաքաղաքը, եւրոպական պետութիւնների դեսպանանիստ քաղաքը, բնակած բազմաթիւ եւրոպացիներով և կրթած բնակիչներով, այսօր մի կատարեալ մարդկային սպանդանոց է ներկայացնում: Փողոց չկայ, մի անկիւն չկայ, որ արիւնտուած չլինի, տաճիկ ամբոխը մօլլաների, սօփտանների ու կառավարութեան այլ ազնւանների ղեկավարութեամբ ու դրդմամբ մի մոլեռանդ արշաւանք է սկսել հայերի դէմ և նրանցից հարկւրաւորներին անխնայ կերպով սրի է անցկացրել, որը տևել է մի քանի օր. և օր չի անցել այդ տևողութեան ժամանակամիջոցում, որ չկոտորէին, օր չէ անցել, որ հայի դիակը սօփտանների ոտերի տակ չձմլէր, օր չէ անցել, որ հայի գանգը չջարդէր և մարմինը չյօշոտէր, օր չէ անցել, որ Վարմարա ծովը հայի ջարդած ու փշուած, յօշոտած ու մասմաս եղած դիակ չհերնկալէր...

Այո, ինչպէս Վասունը, Վամախը, Քամզարան, Պոլսին էլ մի մարդկային սպանդանոց էր դարձել՝ սպանում, ջարդում, ջախջախում էին անպաշտպան, անզէն ու անտէր հայ ժողովուրդին, «հայի պաշտպանների» աչքի առջև:

Հայի արիւն է, որ հոսում է, դիակներ է, որ քաշքշում էին փողոցներում. հայ ժողովուրդը գտնուում է ամբողջովին լեշակերի տրամադրութեան տակ և սա դեռ չէ հագեցել, նա դեռ զոհ է պահանջում, նա դեռ արիւնածարաւ է և կոտորում, մորթում է:

Սարսափը ընդհանուր է. Պոլսոյ հայ ժողովուրդը յուսահատ ու անզէն փախչում է... բայց ո՞ր. թշնամին ամեն տեղ է և զինւած. նա չի խնայում, նա հըրձում, բերկրում է իւր որսին տեսնելիս, և՛ մի գընդակ, մի սրի հարած հասցնում ու անպաշտպան զոհին գետին գլորում և ապա զարծանող նրա անշնչացած մարմնով, նրա յօշոտած դիակով... ահ, տըմարդ թշնամի:

Սարսափը ընդհանուր է. Պոլսոյ հայ ժողովուրդը յուսահատ ու անզէն փախչում է... բայց ո՞ր. թշնամին ամեն տեղ է և զինւած. նա չի խնայում, նա հըրձում, բերկրում է իւր որսին տեսնելիս, և՛ մի գընդակ, մի սրի հարած հասցնում ու անպաշտպան զոհին գետին գլորում և ապա զարծանող նրա անշնչացած մարմնով, նրա յօշոտած դիակով... ահ, տըմարդ թշնամի:

Այս երևակայութեան հազիւ մատչելի դժոխային տեսարանները կատարում են օրը ցերեկով, տևում են օրեր ու ամիսներ, և եւրոպական դիպլոմատիան՝ «հաւածեալների պաշտպանը» բաւականանում է մի պաշտօնական նօտա ներկայացնելով, իսկ սուլթանի արիւնախումբ կառավարութիւնը խոստանում է քննութիւն անել... Այո, քննութիւն անել:

Այս ծաղը է, այս մի դժոխային հեգնութիւն է: Մորթում են, աւերում են, առանց մի բոպէ կանգ առնելու, մինչդեռ իրեն մարդկային իրաւունքների պաշտպան յորջորջող դիպլոմատիան և մամուլը ընդհանրապէս բաւականանում են միայն յիշատակութեամբ. ոչ մարդկային զայրոյթ, ոչ պահանջ, ոչ սպառնալիք: Ամբողջ մի գաւառ, մայրաքաղաքի բնակիչների մի մասը սարսափի են ենթարկւած, հազարաւոր մարդկային էակներ՝ ամեն հասակի ու սեռի սուրբի են բռնւել և մորթւում են երեւակայութեան հազիւ մատչելի ամնջանքներով, դիպլոմատիան ու մամուլը բաւականանում են նկատողութեան առնելով, բաւականանում են միայն ապահովութիւն պահանջելով: Եւ դեռ բաւական է այս, նրանք յարձակում են հայերի վրայ, դատապարտում վերջիններիս և այնքան հեռու են գնում, որ հայերին անւանում են «երախտամուռներ», «արհեստական միջոցով կոտորած հանողներ»...

Ամօթ. հայ ժողովուրդը արհեստական միջոցով կոտորած է հանում, այդ մարտիրոս ժողովուրդը, Ի՞նչ են ասում Տաճկահայաստանի ձեր թղթակիցների հետազոտութիւնները, որոնք քաղաքակիրթ երկիրների ժողովուրդների զայրոյթն են գրգռել ու առաջ բերել այն բողոքները ու պահանջները, որոնք առատութեամբ թափւում էին ձեր թերթերի սիւնեակները ու միստրութեան գրասենեակները: Ի՞նչ են ասում Տաճկահայաստանից ստացած ձեր պաշտօնական թղթերը, արհեստական կոտորած հանող ժողովուրդի ամնջանքների նկարագրութիւնը. ինչ՞՞ է փակել ձեր մինիստրական ամուր մնդուկներում: Խի՞ղճ ունեցէ՞ք, հանեցէ՞ք այդ փաստական նկարագրութիւնը և գուցէ դուք կարդալուց ամաչէք ձեզնից և, ո՞վ գիտէ, դուցէ և արտասւէք...

Այո, յանդիմանում, անարգում է մարտիրոս ժողովուրդը, արեան, արտասուքի մէջ խեղդւող, մերկ սոված, տնից ու ընչից, պատւից, ընտանիքից զրկւած ժողովուրդը, որովհետեւ ուզեցւել է «հանդիսաւոր կերպով բողոքել» մեծ վիզիրին՝ ըէֆօրմների համար պէտիցիա ներկայացնելով, որովհետեւ այս հանգամանքը յաջող առիթ է տւել սուլթանական կառավարութեան իր մաղձը թափելու հայ ժողովուրդի վրայ: Նա հրացանի առաջին հարւածով սկսեց մեծ վիզիրին դիմողներից և, աւելի լայն բնաւորութիւն տալով, տարածեց կոտորածը բոլոր հայաբնակ թաղերը՝ հայ ժողովուրդին սուրբ բռնելով. դարձեալ հայ ժողովուրդն է մեղաւոր, մարդկային իրաւունքների ու արդարութեան պաշտպանները դարձեալ հայ ժողովուրդին են յանդիմանում, իսկ իսկական յանցաւորի՝ կառավարութեան մոռացութեան տալիս: Գատձառը հասկանալի

է... դիպլոմատիան հաւատարիմ է մնում իւր արհեստին: Եւ սա սուլթանի կառավարութեան առջև իբր թէ պատւի խնդիրն էր դրել...

Հասկանալի է թէ ինչու դիպլոմատիան և մինչև իսկ երրոպական մամուլի Հայկական դատը պաշտպանող մասն անգամ այժմ անիրաւացի կերպով մեղադրում են հայերին, յանդիմանում ու սպառնում են նրանց մենակ թողնել գազանի ճանկերում՝ սուլթանի կառավարութեան դիմաց: Հասկանալի է թէ ինչու են այժմ մեղադրում հայերին, թէ և առաջին անգամ կրակ տրւողն ու վերսկսողը եղել է սուլթանի կառավարութիւնը իւր գեադանների, մոլլանների, սօֆտանների, ագէնտների միջոցով, իսկ հայը ընդդիմադրել և ինքնապաշտպանութեան է դիմել:

Ապարդիւն է. հայ ժողովուրդը ոչ մի պայմանով այլ ևս չի կարող հաշտւել ներկայ պայմանների հետ, նա չի կարող դիպլոմատիայի պահանջին բաւականութիւն տալ, նրա «քթադուլտը» լինել: Դիպլոմատիան Պոլսի դէպքի առթով մեղադրում է հայերին, որովհետեւ վերջիններս վիզները չեն ձկել թշնամու սրի առջև, որ իրենց ոչ խարի պէս մորթոտեն, որովհետեւ առիթ են տւել դիպլոմատիայի ներկայացուցիչներին՝ ներկայ լինելու անխորժ ու քստմեղի տեսարանի, տեսարան, որ այսօր տեղի է ունենում պետութեան իւրաքանչիւր անկիւնում՝ դեռ աւելի սարսափելի վանդալական ձևերով, որին ենթարկւած են անխոր կերպով ամեն հասակի ու սեռի արարածները:

Ե՛հ, լինի, թող լռեն, թող յանդիմանեն. հայ ժողովուրդին այդ չէ յուսահատեցնիլ, նա երբէք յոյս էլ չի դրել «պետական լարախաղացների» վրայ: հայ ժողովուրդը գիտէ այժմ համապատասխան զենքով պատասխանել թշնամուն: Թող սուարդ թշնամին այրէ, կոտորէ, այդ նրան չի վախցնիլ, այդ մարդկային կեանքի վերածնութեան պահանջն է: Բայց և այդ տրամարդ, ստոր թշնամին անպատիժ չի մնալ: Ամեն տեղ է ահաբեկիչը, բուն երկրումն է հայրուկը և հայ յեղափոխական ժողովուրդը, որն արդէն սկսել է շարժւիլ և մենք ականատես կը լինինք, թէ ինչպէս նա գիտէ վրէժխնդիր լինել ու պատժել...

Ցաննեակ տարիներ է, որ սուլթանի կառավարութիւնը սխառեմատիքաբար գործադրում է իւր ծրագիրը՝ ողնջացնելու հայ տարրը, դիպլոմատիան ու այսօր պոռացող, սպառնացող մամուլը ձեն ու ծպտուն չեն հանել: Բայց երբ դանակը հասած լինելով ոսկրին, բազմաշարքար հայ ժողովուրդը սկսում է ցոյց տալ ինքնապաշտպանութիւն, երբ նա ճգնում է պատժել իւր թշնամուն, նա. պախարակում, ենթարկւում է ա-

նարդար յարձակումների. որովհետև քաղաքակրթւածները երկար տարիներ լռելոց յետոյ, այսօր, որ սկսել են իրենց փեշերն էլ այրել, ստիպւել են նորից ձեռք առնել Հայկական խնդիրը՝ խաղալու նրա հետ և ահա ամբողջ տարի է կատակներ ու սակարկութիւն են աւում...

Որպէս զի ջնդարները երախտամոռութեան մէջ, յիշենք, որ վերջին ժամանակներս հազիւ անգլիական պատերազմանաւերը սիրտ են առել մօտենալ Գարդանելին՝ Մեծ-Տիմարին ոյժի միջոցով հասկացնելու, որովհետև անկարող են լինում խօսքով համոզել, որ իւր օգուտն է ընդունել ընդօրինակելու: Այստեղ մենք չենք կարող մեզ զսպել և չենք մի քիչ մատնացոյց լինելու կեանքի մի վերին աստիճանի ծաղրի վրայ. — ուժի միջով մարդուն և այն էլ մի կայսրութեան պետին հասկացնել իւր օգուտը, որքան պէտք է թշուառ, ողորմելի լինել, և այդ Մեծ-Տիմարի քմահաճոյքիցն է կախուած միլիոնաւոր մարդկանց ճակատագիրը... միթէ սա կեանքի դառն հեղուկութիւնը չէ և ժողովուրդները պիտի տանեն դրա, այդ անպատուաւոր, անամօթ թշուառականի, հարեմական կեանքով արբեցածի լուծը, շրջութան: Հապա սա դառն ծաղր չէ՞, երբ եւրոպական դիպլոմատիան էլ ձգնում է պահպանել այդ Մեծ-Տիմարի ընթացքը և պահանջում է յարգել, գլուխ խոնարհեցնել նրան:

Չէ՛, արդէն կտրւած են յարաբերութիւնները և այժմ միայն շարունակուած է կռիւը, որ վարուց յայտարարուած է, խնդիրը կը վճռուի միայն երկուսից մէկի ընկնելովը, մահովը — կամ պէտք է տակն ու վրայ լինի, ոչնչանայ սուլթանական պողոտայի կառավարութիւնը, կամ պէտք է ընկնի, մեռնի հայ ժողովուրդը. խնդրի միակ լուծողը մահն է:

Չէ՛, արդէն ամեն ինչ վերջացած է. հայ ժողովուրդը զենքը վար կը դնի՝ կամ յաղթութիւնը բոլորովին տարած, կամ անշնչացած. այլ ևս նրան չեն կարող ոչ վախեցնել և ոչ էլ խաբել. աւելի լաւ է նրան մեռնել, քան ապրել ներկայ պայմաններում և նա կամ կը մեռնի, կամ կապրի, իբրև ազատ մարդ, իբրև ազատ քաղաքացի: Մենք այդ կը տեսնենք:

ԵՐԶՆԿԱՅԻ ՏԱԳՆԱՊԸ

ՀԱՅԳՈՒԿԱԽՄԻԻ ԿՈՒԻԼԸ

Յուլիս ամսոյ 31-ին, կիրակի օր, երեկոյեան մօտերը քաղաքի եկեղեցւոյ հրապարակը, ուր թուրք սայլապաններ փայտ կը ծախին, 25 տարեկան հայ երիտասարդի մը հետ վէճի կը բռնուին, վերջինիս իւր փոքր մի պահանջը ուղեւուն համար: Վէճը կը սաստկանայ. հայ երիտասարդը սայլապանին օձիքը բռնած՝ իւր իրաւունքը կը պահանջէ: Սայլապանը՝ գեաւորի մը իրմէն առնելիք պահանջը ստրկութիւն համարելով, իւր ձեռքի կացինով կը զարնէ հայ երիտասարդի գլխին և կսպանէ զայն: Ներկայ գտնուող հայեր կառավարութեան իմաց կուտան: Արդարութեան պաշտօնեաները կուգան, թուրքի սայլը, կացինը կը տեսնին արիւնոտ և այս բոլորը առ ոչինչ համարելով, ազատ կը թողնեն մարդասպանը ու անոր փոխարէն կը ձերբակալեն այն հայեր, որ կառավարութեան իմաց տալու անլուր ոճիր գործած են, իբրև Ֆիսաստընըզ (յեղափոխական) ու կենթարկեն տանջանաց:

Երկուշաբթի օր հայ հրոսակ խումբ մը, որ կը գլուխէր Սեպուհ լեռան ձորերու մէջ, լսելով այս անիրաւութիւնը, կը դիմէ ուղղակի Երզնկայէ Քեմալ տանող արքունի ճանապարհին վրայ՝ վրէժխնդիր ըլլալու և ճիշտ այն տեղը, ուր Սեպուհի դէպի հարաւ ընթացող վտակը Եփրատը կը թափէ, կը շրջապատէ զինւորական գայմագամը չէրքէզ զինւորներով: Հրոսակապետը հրոսակներէն մի մասը կուղարկէ զօրականաց առաջը կարելու, իսկ միւս մասը ինքն առած իւր հետ ետևին կը կտրէ: Զօրականաց առջևը կտրողները կը ձայնեն՝ «յանձնեցէք» ասոնք շփոթած անմիջապէս ձիերը կը մտրակեն դէպի յետ և երբ կը դառնան՝ կը տեսնին, որ Քեմալն ալ ետևին կտրած է, յուսահատ կսկսին Քեմալին վրայ կրակ ընել. սա կը փոխարինէ և 5 վայրկեան վտանգաւոր կուէ մը վերջ՝ զօրականք չաւուշ մը կուին վայրը թողով՝ կստիպին յանձնատուր ըլլալը Հրոսակախումբի անդամները վրէժխնդրութեան անյազ փափագով կուգեն ամենքն ալ խողխողել, բայց Քեմալն կարգել է անոնց, ըսելով՝ թէ դա վեհանախութիւն չէ, դա միայն ստրուկի գործ է. իմ եղբայրը պատերազմի մէջ վիրաւոր յանձնուած է իրենց և իրենք սպանած են: Գերիների ձեռքէն զենքերը առնելէն վերջ հարկ կը դատեն միւսնոյն վայրը սպասել մինչև մու-

Թը վրայ գայ: և իրենց գերիններն շուքի մէջ նստեցուցած կսկսին խմբովին զւարճախօսութեամբ ժամանակ անցնելու: Այդ պահուն յանկարծ գնդակ մը սուլելով, կանցնի խմբի վրայէն: Դա մի շէշնանէի գնդակ էր, որով հասկցւեցաւ, թէ մօտակայ քիւրդեր օգնութեան հասած կըլլան զօրականաց: Ատոնց կուի բռնելը թերեւս աւելի անպատեհութեան տեղի կուտար. ատոր համար խումբը մաքառներու ետեւ պաշտպանւած կը դիտէ քիւրդերու ընթացքը, առանց պատասխանելու անոնց կրակին: Խումբը՝ տեսնելով, թէ քիւրդի հաւարը եթէ հասնի, յարմար դիրքը կը գտաւէ, միւս կողմէ զօրքերու գալը արդէն կսպասուի, որովհետեւ հաւարը քաղաք էր հասնու:

Երեքշաբթի առաւօտ յանկարծ քաղաքը տակն ու վրայ եղաւ. ամբողջ չորրորդ բանակը սկսաւ դղողել և դիմել գործողութեան վայրը: Քաղաքագետութեան պաշտօնները արագութեամբ և կատաղութեամբ լեցւեցան հայ թաղերը. ուր որ աչքի գարնւած երիտասարդ մը գտան, լեցուցին բանտը: Ենտոյ տարածւեցան դաշտը, հայ երկրագործներ բոլորը իրենց գործի վրայէն քաշեցին և ահա բանտը նորէն լեցւեցաւ հայ բանտարկեալներով: Մինչդեռ մի օր առաջ սպանւած հայի համար դարձեալ բանտարկեցան հայեր: Շատ հիմնաւոր է հայաստանցուն առածը՝ «հայ է, վայ է»: Ահա սուլութանի կառավարութեան «արդարութիւնը», որ հայի մեռելը աստին կը մնայ, իսկ մի չաւուշի համար ամբողջ չորրորդ բանակը, քրդեր ու շէրքէզներ կը քաշին հրոսակ խմբի վրայ:

Հրոսակախումբը՝ չորրորդ բանակի շարժելու լուրն առնելով, երկու շարեաց փոքրագոյնը ընտրեց և սկսաւ բարձրանալ դէպի Սեպուհ լեռան ձորերը: Այդ օրը մինչև երեկոյ կը քալեն և կը հասնին գիշերուայ ժամը 2-ին բաւական ապահով տեղ մը, ուրիշ կարող կըլլային ամեն կողմ տեսնել: Այդ օր ցերեկը հոն կսպասեն, երեկոյեան ժամը 10-նի ատեն կը տեսնեն, որ կառնիէ հեղեղատը սեւացաւ չորրորդ բանակի զինուորներով: Խումբը կը մտածէ այդ գիշերը աւելի ապահով տեղ մը քաշել. բայց իրենց հսկող լծատի փոխանակ աւելի-ստոյգ տեղեկութիւն բերելու, կը ջանն խմբին գաղափարը, ըսելով՝ թէ սոքա կառնիի ոչխար ու արջառներն էին, որ գիւղը կը դառնային. ատոր վրայ խումբը ինքը զինքը ապահով կարծելով, նորէն նախկին տեղը կը գիշերեն: Առաւօտեան լուսաբացին կը տեսնեն, որ յիշեալ գիւղին չորս կողմը լեցւեցաւ զինուորներով, որոնք իրենց առաջնորդ ունենալով՝ Սասնոյ նշանաւոր հերոս Զէքի փաշայի Եսակերը՝ հաղարայեա Ահմէտ, որ իւր բարբարոսութեամբ Սա-

նոյ մէջ իւր տէրն ալ գերազանցած էր, ձեռք առին Լուսաւորչի վանուց ձամբան, որն որ խումբի առաջնէն պիտի անցնէր: Յերեկայ ժամը 1-ին ատեն հասան Լուսաւորչի, ուր զօրքերը ուժասպառ վանքի սենեակները ու պատերու շուքերուն տակ լեցւեցան, իսկ հաղարայետը կսկսի իւր գազանային խաղը ձեռք առնել: Վանքի մէջ ի՞նչ եղաւ, խումբը այդ, ի հարկէ, չտեսաւ. միայն յաջորդ օրը առաւօտեան նկատեց, որ զօրքերը ձեռք առին Աէրէնիսի ձամբան, բայց չկրցաւ մտաբերել, թէ վանքի մէջ պահապան զինուորներ թողած կըլլան: Այդ գիշեր խումբը իւր տեղէն շարժելով, կուգէ մօտենալ Սեպուհի վանքը ու մի քիչ հաց առնել, զի այդ օրը հատած էր իրենց պարէնը: Անդ գիշեր խումբի անդամներէն երկուքին կը պատահի քիւրդ մը, Իպիշ անուն: Քեռին գիտնալով ատոր բարեմտութիւնը, չուզեր մահացնել: Հրոսակախումբը այդ գիշեր կը հասնի որոշեալ տեղը, միւս օրը մինչև երեկոյ հոգ Խուցի-Քար կոչւած ժայռի մէջ սպասելէ վերջ, գիշերը 4 տղայ կը խրկեն վանքը, որ հաց բերեն և զինուորներու ուր գնալը հասկնան: Յղայք կերթան և վանքի գիշերապահ զինուորներուն հանդիպելով առանց հացի ետ կուգան: Խումբը այդ օրը դարձեալ կը մնայ առանց հացի: Երեկան ամեն կողմէ կը յուսահատուին ու մի ծայրայեղ միջոցի կը դիմեն: Վը խրկեն իրենց ընկերներէն մին Աւագ վանք, գնացողը կը մնայ հոն ամբողջ օրը, որ էր շաբաթ, ոչ հաց կը բերէ և ոչ ալ խմբի մասին ելած տեղեկութիւններ: Այդ օրը երեկոյեան զօրքերը վերադարձան դարձեալ վանք:

Հիմա պատմեմ՝ թէ ի՞նչ առիթ տուաւ այդ վերադարձին: Երբ զօրքերը հինգշաբթի կը հասնին Աէրէնիսի Քերէր ըսած թրքաբնակ գիւղը և հոդ չկրնայով խմբին հետք գտնել, կը վերադառնան Գոմեր կոչւած գիւղը, որու բնակիչներ հայ և թուրք են, առաւօտուն յուսահատ երջնկայ վերադառնալու նպատակաւ: Գիւղին քահանան, տէր Մարկոս, գիտնելով և վատազգ հայր, կը մօտենայ հաղարայետին և կըսէ—«Ի՞նչ կը փնդոնէք»: Աւագանները, կըսէ հաղարայետը. «Հաւազանները կամ Սերովբէք կոչւած վանքի սահմանները կը գտնուին կամ Սեպուհի վանքը, կամ մօտակայ ժայռերու մէջ կըլլան»: Առ այս հաղարայետը շաբաթ օր դարձեալ ձեռք կառնէ Լուսաւորչի ձամբան:

Խումբի տեղափոխուած գիշերը, ըսինք թէ քիւրդ մը երկու խումբի երկու անդամը տեսած էր, դա կը հասնի իւր գիւղը Գոմերի և իւր բնական բարեմտութեամբ չուզեր ձայնը դուրս հանել, միայն ցանկալով ծառախուծիւն ընել հրոսակախմբին, լուր կուտայ գիւղին մէջ գտնուող նշանաւոր հայ անձանց (այս գիւղը կարծես

յատուկ մասնութեան համար ստեղծւած է): Այլ ևս իրենց գործ բացւած է, քանի որ Լուսաւորիչ վանքին հետ արօտատեղիի դատ մը ունին: Գիւղին գլխաւորները՝ Արդան օղլի Մինաս, Արբաճամ քէհիայ և Խաչօ քէհիայ կը հաւաքին ամբողջ գիւղի հայ և քիւրդ բնակիչները, կսկսին համոզել Իպիշին, որ լուր տայ գիւղը գտնուող ձիաւորաց զօրնայեան: Սա որ գիւղի արջառններու հովիւն ըլլալով, իւր ապրուստը գիւղէն կսպասէր, վերջապէս կը համոզուի գիւղացոց առաջարկը ընդունել և զօրնայեան տեղեկացնել խումբին Լուսաւորիչ սահմանները գտնելը: Ըարաթօր յիշեալ քիւրդը՝ աննելով իւր երկու բարեկամները, ճանապարհ և Գուրսու, որ Լուսաւորիչ վանքին ռեստորաններն էին, կերթայ հապրապետին քով Լուսաւորիչ ինչ միւս քիւրդեր կը տարածուին Թաիսուլու էշիրէթ կոչուած քիւրդերու գիւղերը և հաւաքի կը կանչեն: Խումբը այն ամեն շարժումներ կը տեսնէ, բայց իւր վրայ եղած մասնութիւնէն անտեղեկ, դարձեալ հող կսպասէ, որ Աւագ վանքէն հաց պիտի դար: Կիւրակէ առաւօտ, երբ խմբին անօթութեան չորրորդ օրը վերջացաւ, հացի գնացող ընկերը եկաւ լուսաբացին բաւական ետք: Երեք հատ հաց բերելով մի աղայի հետ, յայտնեց թէ պիտի իջնել Աւագ վանքի սահմանները, որ մեզի հաց պիտի բերեն: Խումբը այս յուսախաբութեան վրայ մնաց շարած. մոռանալով, որ ցորեկ ատեն իւր թագստի տեղէն ելել բոլորովին վտանգաւոր էր, բայց ինչ ընէր, 4 օրան սովին յաղթել անկարելի էր: Խումբը անպակաւ ելաւ իւր անպատանարանէն և սկսաւ քայլել դէպ ի Գօռուզ կոչուած ձորը: Այս պահուն զօրնայեանները, որ դիտակները ձեռքերնին արթուն կը դիտէին չորս կողմերնին, տեսնելով խումբը, կը հետապնդեն: Խումբը կը քայլէ և երբ Ղչանկա ըսած քարայրին առջև կը հասնին, հող մի քանի փայտահատ թուրքեր կը հանդիպին: Խումբը այս անգամ կը փոխէ իւր ճամբան և կելնէ իւր առջևը գլուխը գետակին վրայ, որ Կառնէի հեղեղատին մէկ ձիւղն է և որ Զինբուժիի ջուր կանաւնի: Տղայք հող պող ջրով քիչ կը զովանան և երբ դիմացի կողմը կանցնեն, իրենց նախկին անպատանարանէն 3 հատ մարտիկի ձայն կը լսէ. տղայք կաճապարին իրենց առջևը գտնուած պարսպաձև զառիվարը ելել և երբ կը նկատեն զօրքերը, Քեռին ձայն կը տայ՝ «Տղայք մի վախենաք, քալեցէք»: Այդ պահուն զինուորներու կողմէ պատերազմական փողերու հրահանգաւ հրացանաձգութիւն ըսկսաւ. գնդակները սկսան կարկուտի պէս տեղալ խմբի գլխին: Քեռին, որ խումբի առջևէն կերթար և որ շատ լաւ ուսումնասիրած էր Սեպուհի ամեն մի վայրը, դու-

շակեց, որ տեղացի քիւրդեր զերենք պաշարելու միջոցը ձեռք առած կը լլան. «տղայք մի վախենաք, քալեցէք», շարունակելով, սկսաւ ժայռի վերը ելլելը: Հազարապետը, որ դիտակով կը դիտէր շարունակ, կը ձայնէ՝ «Ծօ, մեծերնին զարնէք»: Գնդակի տարափը սկսաւ Քեռիի գլխին: Զօրքերը երթալով, կը շատանային: Գնդակներու այդ տարափի ժամանակ աներևոյթ ձեռք մի բացարձակ օգնութեան կը հասնի Քեռին, որ կանաչներու սուրոցի, տարափի տակ, կակուղ հողէն բարձրացած շամանգաղին մէջ կորուած, կը շարունակէր իւր ճամբան առանց այլայլելու: Արջապէս Քեռին՝ տեսնելով, որ իւր բոլոր ընկերները չպիտի կրնան իրեն հետեի և զօրքերը իրենց գնդակներուն պատասխան չստանալով, պիտի համարձակեն խմբին ետեւէն գալ. ինք, որ ամենէն տոկոսն էր և վարժ այս կեանքին, սկսաւ փութացնել իւր քայլեր, որին հետեւեցան մի քանի ընկերներ. սրանց թուումն էր նաև իւր սիրելին՝ 18 տարեկան երիտասարդ... *) անունով ՔՈՅԸ յանկարծ ետեւէն տխուր ձայն մը «Քեռի» կը ձայնէ. Քեռին կը դառնայ և կը տեսնէ իւր սիրելին՝ վառնուած և արիւնթաթախ ինկած գետնին. բայց շարունակ ժամանակ չէր, որովհետեւ ամբողջ խումբին կը սպառնար միևնոյն վտանգը. կը հասնի անմիջապէս, վերաւորեալ կը գրկէ և կաղնիի մը շուքին մէջ պատրուկաբար վերջ, զէնքեր ու փամփուշտները վրայէն կառնէ: Խեղճ աղիկը հազիւ կրնայ խեղդուկ ձայնով մը ըսել՝ «Քեռի, վրէժս»: Քեռին համար արեւը մթնեց, բայց ստիպուած էր կարճ միջոցի մէջ դուրս գալ և յարմար դիրք գրաւել: Այս պահուն հազարապետը, երբ կը տեսնէ գնդակներու տարափի տակ այդ գործողութեան կատարելը, հիացած կըսէ իւր զօրքերուն՝ «Տեսէք հայերու քաջութիւնը՝ որ դիտակին անգամ անպաշտպան չեն թողուր. աւելի լաւն էր ձեզի պէս 200 զինուոր ունենալու, նոցա պէս 10 տղայ ունենայինք»: Այն ատեն զինուորները կը պատասխանեն՝ «Ինչ որ սովորական բան մը է տաճկական զօրքերու մէջ, եթէ ունենայինք այն տեսակ խմբապետ մը, մենք ալ հրաշագործներ կը դառնայինք»: Զայս և սոյնպիսի շատ խօսքեր հազարապետը և զինուորները կը խոստովանին հասարակութեան առջև անգամ՝ առանց ամօթ մ'զգալու: Քիչ վերջ Քեռին կը հասնի իւր փափագած վայրը, ուրկից կարող էր իւր չորս կողմը դիտել, կը տեսնէ, որ զօրքերը իրենց պատնէշներէն ելան՝ դէպի ջուրը կը դիմեն, որ խմբին մօտենան: Քեռին մացառի մը ետև կշտկէ

*) Անունը անընթացն է:

Տրացանը և կուղղէ Յ զինւորներու, որք իրարու ետեւ շարած կիջնեն ջուրի վրայ: Արակ ընելուն պէս, զօրքերը իրար կանցնին և պատնէշներին ելածները նորէն կը լեցւին քարերու տակ: Յետոյ կստուգւի, որ այդ զինւորաց երեքն ալ սպանւած են: Քեռին կը դառնայ խումբին կողմը՝ «Տղայք, շուտ ըրէք, քովս հաւաքւեցէք»... Բայց ո՞ր կրնային հաւաքւել չորս օրւայ անօթի տղայք: Այս պահուն կը նկատեն, որ զօրքերը խումբի կողմը անցած են, որոնցմէ Յ-ը նստած են այն քարի վրայ, որուն տակէն խումբին հետամնաց տղայք պիտի անցնէին և կը հարեն տղոցը՝ «Ծօ, վար եկէք, յանձնուեցէք, եթէ չէք ուզեր ջարդուիլ»: Քեռին կրակ կընէ երեքին մէջ տեղը նստող զինւորին, նա անմիջապէս թռկերը բացած դէպի անդունդ կսրանայ: Ասոր վրայ ջուրէն աստին գտնուող զօրքերը արագութեամբ կիջնեն ջուրի վրայ և հոն կը պատսպարւին: Մինչև այդ ժամանակ Քեռին օգնութեան կը հասնին իւր ընկերներէ մի քանին և ահա կուր սաստկացաւ զինւորները սկսան իրար անցնել: Քեռին մի կողմէ կը ձայնէր իւր հարազատներուն: Տղայք, թէև ուժասպառ, նորէն ոգի ի բռին կաշխատէին դուրս գալ այդ մահաբեր թակարդէն. կուրը տեւց 2 ժամ: Յետեւորով, որ զօրքը այլ ևս չպիտի համարձակի իւր պատնէշներէն դուրս գալ և ինքը պիտի կրնայ ատոնց հրացանաձգութեան պատասխանել. մէկ կողմէ տղայքը խումբ խումբ կը խրկէ Բաղարջի կողմը լեռնադաշտին կողմը տեսնելու համար, թէ զիրենք պաշարելու դնացող քիւրդեր և զինւորներ ուր մնացին, իսկ իրենք կը գրաւեն յարմար դիրք:

Տղայք բաւական կը հեռանան. Քեռին կը կարծէ թէ իւր բոլոր ընկերներ ապահոված կըլլան, ինքն ալ կսկսի նահանջել և կը մտնէ քովի անտառը: Արձ միջոցի մէջ, դուրս կուգայ անտառէն, կանցնի Բաղարջի լեռնադաշտին հիւսիսային կողմէ և իւր ընկերների ետեւէն կը շարունակէ ընթացքը: Յանկարծ իրենց վրայ կրակ կըլլայ: Ձօրքի մի մասը, որ հասած էր Բաղարջի տակ, քարերուն մէջ տեսնելով խումբի նահանջելը, կսկսի կրակ ընել: Հոս պէտք էր դարձեալ կուել: Այս անգամ խմբի դիրքը աւելի ապահով էր, բայց և այնպէս անօթութիւնը, որ իրենց ամենավտանգաւոր թշնամին էր, կստիպէ զիրենք վայրկեան մը առաջ դուրս գալ այդ պաշարումէն, ուստի Քեռին կսկսի մէկ կողմէ երկուս-երկուս, երեք-երեք իր ընկերները դէպի յառաջ խրկել Աւագ վանքի ճամբով միւս կողմէ կուել, որպէս զի զօրքը շփոթած լինելով, անվտանգ անցնեն այդ կուի միջէն ալ: Հրացանները շտկւած էին Բաղարջի կողմը: Յանկարծ տեսնուեցաւ, որ խումբի ընկերներէն

մին, քրդական զգեստով, ելաւ Բաղարջի արտ ըսած տեղը, բոլորովին ուժասպառ. զօրքերը զայն տեսնելուն անմիջապէս պատնէշներէն դուրս կուգան՝ «Թէսիմ, թէսիմ» ձայնել: Քեռուն Տրացանը կը գոռայ և ահա զինւոր մը սկսաւ տապալել. միւսները հացը իրենց հետ առած, դարձեալ քաշուեցան քարերու ետեւ. հոս դարձեալ կը կուին մի ժամի չափ. ընկերաց վերջը կուգայ և երբ կը տեսնէ, որ միայն 5 ընկեր մնացած են իրեն հարազատներէն, այլ ևս սպասել չէր ըլլար, պէտք էր իրենց վիճակին դարման տանել: Արձեւելով թէ միւս ընկերները, եթէ իրենց ալ չհետեւին, անշուշտ ապահովութիւն գտած կըլլան (նա չէր նկատել որ իւր սիրելիներից Յ չկան, իրեն-չերևցան), կսկսին Աւագ վանքի դիմացի զառիվներէն դէպ ի ցած իջնել:

Քեռին անօթութեան և ծարաւէն բոլորովին գունատ և շնչասպառ կսկսի ետ մնալ: Խումբի տղայք կը հասնին Աւագ վանքի դուռը և «հաց, հաց» կը ձայնեն: Աւարդան վարդապետի եղբայրը՝ թօփալ հաճի Յակոբ, որ իւր վարդապետ եղբոր արժանաւոր յաջորդն է, պահ մը կշարի և տղայոց ձեռնթափ ճամբայ տալ կուգի, բայց վանքի մէջ սրտոտ երիտասարդներ անմիջապէս մի քիչ հաց տալով, ցոյց կուտան տղայոց Խորունկ ձոր կողմը ճամբան:

Քեռիի այս վիճակը այնչափ դէշ տպաւորութիւն ըրաւ տղայոց վրայ, որ պահ մը կարծեցին՝ թէ զարնւած ըլլայ, յետոյ հանդարտեցան՝ տեսնելով, որ դա ուրիշ բան չէր, բայց եթէ շարունակ խօսելէ և կրուելէ առաջ եկած ուժաթափութիւն: Շատ երկար չէր կրնար սպասել հոս ալ, ուստի երբ մի քիչ հանգչելով կազդուրեցաւ, իւր դողողացող ծունկերը դարձեալ առաջնորդեց իւր հարազատներուն դէպի ձորին աջ կողմը խիստ անտառներուն մէջ, ուրկէ հարկ եղած ժամանակ կրնային Աւագ վանքը տեսնել: Մէկ ժամ վերջ փողի ձայնը կսկսի հնչել. տղայք կը նկատեն, որ զօրքերը հաւաքուեցան Աւագ վանք, իրենք այդտեղ կը սպասեն մինչև երեկ. ժամի 12-ը և անկից կը քայլեն դէպի հիւսիս և Չարախլի անտառներու մէջ կանայտանան: Խումբի անդամոց մի մասը՝ Քեռիի տեւած հըրահանգը սխալ ըմբռնելով կը բարձրանան սարի գագաթը և մինչև երեկոյ քայլելով, կը հասնին մի դիւղ և հաց առնելով, կանայտանան գիշերւան մթութեան մէջ:

Յաջորդ օր ազատուածները մէկմէկ կը գտնին. 5 հոգի պակաս էր, — մին արդէն Քեռիի աչքին առջև զարնւած էր և միոյն ալ զօրաց յանձնելը տեսած էր, իսկ Յ-ը բնաւ չկար. ասոնք, աս Յ-ը կը մնան Ջրաբաժինի ջրին վրայի անանցնելի ժայրերու մէջ, բոլորովին

վին ուժաթափ, փրկութենէ անյոյս: Զօրքերը կը պաշարին չորս կողմէ զանոնք, տղայք յուսահատական կը-
 ուիւ մը կսկսին և բաւական երկար դիմադրելէ վերջ
 ընկերներին մին 3 գնդակի հարած ընդունելով կի-
 նայ. երկուքը կը շարունակին իրենց կռիւը և երբ միոյն
 հրացան անգործածելի կը դառնայ և զօրքն ալ չորս
 կողմէ կը պաշարին տղայքը, վերջիններս կստիպեն
 անձնատուր ըլլալ:

Ահա չորրորդ զօրաբանակի մի շարք լեռները թա-
 փառելու արդիւնքը: Ախ, եթէ սովը չլլար: Զորրորդ
 բանակի կորուստը բազմապատիկ է. աբ իրենք զօրքերն
 ալ բաց բերան կը խոստովանին:

Կուին յաջորդ օրը ԱՏմէտ հազարապետը լուր կու-
 տայ իւր աւազակազետին՝ բանակի հրամանատարին և
 լեռնային թնդանօթներ կուզէ, աւետելով թէ աւա-
 զակները պաշարած է, բայց մարթինի գնդակին հասնե-
 լուն չափ մօտենալը շատ վտանգաւոր է: Սասնոյ կոտորածի
 հերոսը կը խրկէ չորս հատ լեռնաթնդանօթ. բայց
 ո՞ր պիտի գտնէին մեր տղոցը, որոց ազատուածները ար-
 դէն ապահովութիւն գտած էին: Բանակը 15 օրի չափ
 Սեպուհի ձորերը, անտառները և ապառաժները չափե-
 լէ վերջ, քաղաք վերադարձաւ: Իրենք կը հաստատեն
 իրենց կորուստը՝ 60 սպանուած զինուոր և 100-ից ա-
 ւելի վիրաւոր, որը և ճշուեց, թէ և Քեռին կը կարծէր,
 որ իրենք սպանած են 16-20 զինուոր և մի այդ չափ
 ալ Սեպուհի ժայռերուն բաժին եղած ըլլայ:

Խեղճ կառավարութիւնը ամեն ճիգ կը թափի Քեռին
 ձեռք բերել, բայց ապարդիւն. նա ապահով է և կը
 պատրաստի իւր ոտքը հասած տեղը աւելի յուզման
 մէջ դնել:

Ն Ո Ր Կ Ո Տ Ո Ր Ա Մ

Կ. Պոլիս, 21 Սեպտեմբեր, հինգշաբթի.

Կոտորածը, որը հետեանք է հնչակեաններու մի խա-
 յալ ցոյցի և որն սկսուել է երկուշաբթի, դեռ կը շա-
 րունակի: Երեկ գիշեր ֆասըմ փաշա հայոց թաղը
 սրի անցուցին թուրքերը. սպանուածներու թիւը հա-
 րիւրներով կը հաշուին:

Բոլոր հայաբնակ թաղերը շատ թէ քիչ փնասուած են,
 մեծ այլ կոտորածներ և աւերումներ կատարուեր են. Ստամ-
 բուլի կողմ և ֆասըմ փաշա թաղը մասնաւորապէս շատ

փնասող թաղերն են: Ընդհանուր սարսափ կը տիրէ:
 Իպրոցները սեպտ. 18-էն գոցեցան: Սարսափահար ժո-
 ղովուրդը եկեղեցիները ապաւինած է: Ստամբուլի կողմը
 հայոց խանութները մեծաւ մասամբ գոց են: Փողոցներու
 մէջ սպանութիւնները անպակաս են: Արիւնը ուշա-
 թուրքերը զինեալ արձակ համարձակ փողոցները կը
 պատին և հանդիպած հայուն կը զարնեն՝ կսպանեն
 չարաչար տանջանքներով: Մինչև իսկ թուրքերը կը
 յարձակին՝ ոստիկաններու ձեռքէն կը յափշտակեն ձեռ-
 բակալած հոյր և սոսկալի տանջանքներով կսպանեն և
 ազատ ու անպատիժ կը շարունակեն իրենց ճամբան:
 Ոստիկանքը և լրտեսները փողոցները հանդիպած կաս-
 կածելի հայերը կը խուզարկեն, որի վտայ զէնք գտնեն,
 կը գրաւեն և զինքը կը բանտարկեն: Բանտերու մէջ
 սոսկալի, անլուր տանջանքներով կը մեռցնին բանտար-
 կեալները: Թուրքերն անգամ սարսափով ու քստմնե-
 լով կը պատմեն բանտարկեալներու կրած տանջանքնե-
 րը և սպանութիւնները: Տասնեակներով կենդանի կեն-
 դանի ղլխիվար հօրեր նետած են: Բանտարկեալներու
 թիւը հարիւրներով կը հաշուին: Ստամբուլ, Ղալաթիայ
 Պէշկիթաշ, Գում-Գաբու, բոլոր թաղերու մէջ ժամ
 չանցնիր, որ քանի մը հայ չսպանուի: ԱՏուրի և տը-
 մարդի կերպով կը վարուին նոյն, իսկ անշնչացած դիակ-
 ներու հետ: Անշունչ դիակը սոսկալի ճեծի կենթար-
 կեն նորէն: Ականատես մը կը պատմէ, որ ինքը աչքով
 տեսաւ՝ թէ ինչպէս անշնչացած դիակներ մահակներով
 ջարդելէն ետքը, վրանին ելած ոտքերով կը կոխկրտէին.
 ուրիշ տեղ մը կատաղի սօֆթաները քանի մը հայ
 ձերբակալած՝ ականջները, բեխերը քաշելով պրծնելէն
 ետքը, գանգը փշրեցին և ոտքէն բռնած քաշ տւին, ծո-
 վը նետեցին. քաշ տւած ատեն ուրիշները մահակներով,
 կացիներով կը զարնէին ետևէն և մարմինը իրարմէ
 կը բաժանէին, կը յօշոտէին:

Զինավաճառի խանութներէն իսլամը միայն իրաւունք
 ունի զէնք գնելու, քրիստոնեաններուն արգելւած է: Զի-
 նավաճառի խանութներու առջև ոստիկաններ և լըր-
 տեսներ արգոսի աչքերով կը հսկեն, որ քրիստոնեա-
 ներ զէնք չգնեն: Երեկ մօտ հարիւր հայեր, որ փոր-
 ձած էին զէնք գնել, ձերբակալած և անլուր տան-
 ջանքներ տալով բանտարկած են. իսկ երկու հայ երի-
 տասարդներու պնայիսի սոսկալի, տմարդի կերպով ճե-
 ճեցին, որ հաղու թէ կենդանի մնացած լինեն:

Խաներու, թաղերու և փողոցներու մէջ կոտորած
 հայերու թիւը բաւականի մեծ է: Բազմաթիւ դիակ-
 ները անհետ ըրած են: Իրենք՝ թուրքերը կը պատմեն,
 որ միայն Ստամբուլի կողմէն բազմաթիւ կառքերով դի-
 ակներ տարան, ծովը թափեցին: Մախուսակի երկու շո-

դեմաւեր գիշերը հարիւրաւոր դիակներով կը մեկնին եղեր Մարմարա, ուր ծովու մէջ կը թափին դիակները: Յարդ և ոչ մէկ դիակ անցած է հայերու ձեռքը: Ինչպէս դիակը իսկոյն անհետ կընին և արեան ամեն հետք անմիջապէս կանհետացւին: Թուրք պաշտօնեաները անսպասելի ճարպիկութեամբ, արագութեամբ և չտեսնուած փութաջանութեամբ առաջ կը տանին դիակներու անհետացման գործողութիւնը:

* * *

Ուրբաթ, Սեպտեմբերի 22-ին.

Երեկ գիշեր նշանաւոր դէպք չպատահեց: Սպանուած են 20-25 հոգի:

Կարին, Տրապիզոն, Երզնկայ, Ռոզոստո, Դէրէնդաճ ևս կոտորածներ են տեղի ունեցեր: Վանի վրայ ևս յարձակում է եղեր: Սոպոգ և մանրամասն տեղեկութիւններ կը պահասին:

Կ Ա Ր Ի Ն Ի Բ Ա Ն Տ Ի Յ

Մ Ե Ր Մ Ի Ը Ն Կ Ե Ր Ո Ջ

Փ Ա Խ Յ Ն Ե Լ Ը

Մենք այժմ սկսել ենք բանտերի հետ էլ գործ ունենալ և մեր առաջին քայլը կատարեալ յաջողութիւն ունեցաւ: Օրերուսն Կարինի բանտից օր ցերեկով զինւորների ու պահակների ձեռքից մեծ յաջողութեամբ փախցրինք մեր ընկեր Արշակ Սադաթեանին:

Արշակը մի բասենցու ընկերակցութեամբ առաջի անգամն էր ոտ դնում Յաճկահայաստան և, տարաբախտաբար, ճանապարհին նրան հանդիպում են երեք զապթիաներ, որոնք, ըստ իրենց մշտական սովորութեան, անց ու դարձ անողին ենթարկում են քննութեան՝ մի որ և է բան կորզելու նպատակով, ու բանտարկում իբրև հայ «կոմիտաճի»: Հենց նախընթաց գիշերն էլ մի անշուստ ընդհարումն էր տեղի ունեցել զապթիաների և «կոմիտաճիների» մէջ: Նոյն քննութեան են ենթարկում Արշակին և իր ընկերը. և որովհետև Արշակը չգիտէր տաճկերէն, այլ, իբրև զարաբաղցի՝ Ղարաբաղու թուրքերէն, լեզուն իրեն մատնում է. զապթիաները նրան իսկոյն բանտարկում են, ասելով՝ «օյւան, դեօպօրու գեօպէկ, սէն գեօպլուր, մօսկով, սէն կազակ, սէնի գիւթերաջազախ գորդոնա, թէզ բիզլմլան իլէրի»

և մտրակելով քշում են Արշակին դէպի մի թուրք դիւղ: Ճանապարհին դեռ գիւղ չհասած կողոպտում են Արշակին՝ ենթարկելով չարաբարների, առնելով նրանից թէ մի արծաթ ժամացոյց, թէ սուլիչը, թէ հագուստը և մինչև իսկ դուլպաները:

Մենք լուր առնելուց՝ անմիջապէս միջոցներ ենք ձեռք առնում նրան ազատելու: Յայտնում ենք և X դիւղի մեր մարդկանց, որ կաշառեն զինւորներին՝ Արշակին ազատելու. բայց չի յաջողում: Հնարհիւ այն հանգամանքի, որ գիւղի տաճիկները իրիստ գրգուռած լինելով հայերի դէմ, սպառնում են նրան անպանել և գողցել անէին, եթէ Արշակը ուսումնասիրեց չի կրէր. Արշակը խոստովանել էր, որ ինքը հայ է և ուսումնասիրեց Այդ տեղից նրան անում են նոյն տանջանքներով քրդաբնակ Արջաչալի գիւղը, ուր տնիսում են խոստովանել իր գաղտնիքները. Արշակը մերժում է: Արտաչալիից տանում են Ղարաբիլիսա՝ տաճիկացի կորդոնը և յանձնում հարիւրապետ Միրզաբէկին:

Ղերջնու Արշակին ենթարկելով անլուր աննշանքների, ստիպել է տալիս խոստովանել իւր նպատակները: Միրզաբէկը հասած լինելով իւր նպատակին, շտապում է Արշակին բերել Հասանգալէ և յանձնել գալմազամին: Այս գիւղաբաղայքը բաղկացած է 3000 մահմետական և 15 հայ տներից, մշտական պահուում է մօտ 200 համիտիէ զինւորներ: Արշակին 15 օր ոստիկանատանը պահելուց յետոյ, նրան տալիս են մի առանձին սենեակ և բաւականին լաւ ինձամում, յուսալով, որ այդ միջոցով կարող կը լինեն նրանից գաղտնիքներ առնել, և բացի այդ, նրան ստիպում են մատնել, իբրև յեղափոխականների, տեղագան մի քանի իրենց ցանկացած մարդկանց ու այդ նպատակաւ նրանց առջուց ցոյց են տալիս Արշակին: Հասնում է դատի օրը: Հրահիրում են դատապարտեալները՝ ալիշիբրակցի դարբին Աղաբարին, իւզվէրանցի մաջլիսի անգամ Յակոբ աղային և էրզրումցի Գաւթի Գասեանին: Արշակը բաց է բաց մերժում է այդ ստորութիւնը հրապարակաւ, յայտարարելով, որ այդ մարդկանց մինչև իսկ չի ճանաչում: Այնուհետև սկսում են Արշակի դժոխային տանջանքները, որ կրկնում են ամեն օր սուլթանի կառավարութեան բանտերում: Ղերդիշիալ երեք անձանց ևս բանտարկում են:

Արշակը բերում է Կարին և բանտը տրւում: Հենց այդ օրերում ստացւում է բանտարկեալներին բանտից ազատելու սուլթանական ֆիրման: Ազատեցին 25 մարդ, որոնց մէջ և Հասանգալէյի 3 բանտարկեալները, բացի Արշակից:

Մենք մի րոպէ բաց չթողինք այն միջոցները, որ

ձեռք էինք առել Արշակին սղատելու և այդ մեզ յազդուեց: Ինչպէս արդէն յիշեցի նամակիս հենց սկզբում, որը ցերեկով, զինուորների և պահակների աչքի առջև, նրանց ձեռքից Արշակին, փախցրինք բանտից առանց մի որ և է զոհ տալու: Թէ Արշակը և թէ ազատիչները այժմ ապահով են: Առաջադրութիւնը ապշած, գլուխը կորցրած այդ յանդուգն գործից, ընկել է Արիինի փողոցները ու տները՝ գտնելու թէ Արշակին և թէ ազատողներին: Բայց երկար կը փնտրի:

Ն Ա Մ Ա Կ

Շ Ա Պ Ի Ե - Գ Ա Ր Ա Հ Ի Ս Ա Ր Ի Ց

Շապին-Գարահիսարի և շրջակայից հայ խանութները ցարդ գոց են: Օգոստոս ամսոյ սկիզբը Թամիզարայի մէջ տեղի ունեցած կոտորածի փորձէն ի վեր, վալի փաշայէն և Սեբաստիոյ առաջնորդ Պետրոս Եպիսկոպոսէն եկած հրամանները՝ խանութներու բացելուն անկատար մնալուն համար, նոյն վալիէն յատուկ քննիչ մը ներկայանալով Գարահիսար՝ խանութներու բացումը կը պահանջէ: Հայերը դարձեալ նոյն պատասխանը կուտան, թէ «Ներկայ կառավարիչ Մուստաֆայ պէյ և իւր արբանեակները եղող ընդհանուր դատախազի օգնականը և նորա գրագիրը տեղացի Էտհէմ պէյը, հարցաքննիչ գատաւորի տեղապահ՝ Մուստաֆայ էֆէնտին, Թաղապետութեան շրջանակի նախագահ՝ Սապիթ էֆէնտին և նորա գրագիր՝ Մեհմէմէտ էֆէնտին, ծխախոտի ըէֆէի գօշմարտիչ Քէճա էֆէնտին, փաստաբան Աւետիս էֆէնտին և պատժական դատարանի անդամ՝ Քոթոթեան Անտոն աղան, կառավարութեան պաշտօնատուներն դուրս կելլան այլ ևս հոն չի մտնելու պայմանաւ երկրորդ, մեր դատերը կը տեսնուին և կը գիտնանք, թէ ինչու վեց երիտասարդներ բանտին մէջ սպանեցան. ինչու այս չափ մարդիկ հարուստ և աղքատ բանտ լեցելով՝ ստակով արդարացան, եթէ երբէք յանցաւոր էին. երրորդ, կատարեալ ապահովութիւն կուզենք մեր կենաց, ընչից և պատուոյ ահա այն ժամանակ մենք առաջնան նման մեր գործերը կը շարունակենք»:

Այս պահանջներու արդիւնքն էր, որ վերոյիշեալներէն մի քանիներ պաշտօնանկ եղած են, բայց ընդհանուր չարեաց աղբիւրն եղող կառավարիչը տակաւին նստած է իւր աթոռը և բացարձակապէս կը պողայ, թէ «բայցէք խանութները, ապա թէ ոչ Մասունի նման ձեզ ալ կը ջարդեմ»:

Ընդհանուր դատախազի օգնականը փոխանակ պաշտօնանկ ըլլալու, որովհետև սուլթանական կառավարութեան հարազատ պաշտօնեան է, Ամասիայի նոյն

պաշտօնէին հետ տեղափոխուել կը որոշուի և ընտանեօք միասին Սեբաստիոյ ճամբով պաշտօնատեղին գնալու միջոցին հայդուկային խմբէ մը կը պաշարուի և երեք սուտիկաններ սատկելով, ինքն ալ լեռը կը տարուի և մի քանի օր վերջ կսպանուի, շնորհիւ վեհ սուլթանին. նա իւր արդար վարձքը կընդունի, բայց գարահիսարցիներուն տանջանաց նոր ասպարէզ մը կը բացուի, որպէս թէ Գարահիսարի հայդուկներն ըլլան այդ քաջերը և ժողովուրդն ալ մեղսակից, քաղաքին մէջ ով որ կանքիչ թէ շատ կորիճ՝ այժմ խոնաւ բանտերու անկիւնները, քաղցած ու ծարաւ, սոսկալի տանջանքներով կապրին:

Ժողովրդոց մեծագոյն մասը արդէն կատարեալ աղքատութեան մէջ կը հեծէր. ամիս ու կէս խանութ և առևտուր բոլորովին փակ. Թամիզարայի ժողովուրդը մօտ երկու հարիւր յիսուն տուն քաղաքին գերեզմանատան մէջ՝ հաց կուզէն... սյսքան թշուառութիւն չէր բաւեր, նոր բանտ, նոր տանջանք և ատոնցմէ աւելին՝ դիշեր ու ցորեկ արիւնշաղախ կոտորածի մը վախը ժողովուրդը կատարեալ վճատութեան և սոսկումի մէջ են ձգած:

Պատրիարքարան ուղղեալ վեց հեռագիրներ հասցէին չեն հասած և վերջերս ընդարձակ նամակաւ մը այդ վեց հեռագիրներու ընկալագրերը խրկած են պատրիարքարան:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Վ Ա Ն Ի Ց

I

Հայրենիքի դաւաճան և խթինափի (վերաքննիչ տուեան) հայ անդամներէն՝ Նալբանդեան Վարապետը զարնեցաւ ըէփօլէթի մէկ հարւածով՝ ասկէ 15 օր առաջ. հարւածը անփնաս անցաւ և գնդակը դուրս հանւած է: Ժողովուրդի անկեղծ զգացումի արդիւնք էր այդ: Բահրին կատղեցաւ ինքն իր մէջ՝ տեսնելով իւր մտերիմ՝ հարազատի կորուստը, բայց հակառակ ուրիշ անդամներու քանի մը տուններ միայն խոզարկելով բաւականացաւ, չյաջողելով ձեռք բերել այդ անվախ հերոսին, որ օր ցերեկով փորձեց սպանել ցած մատնիչ հային:

Առաջադրութիւն խիստ կզգուշանայ ժողովրդական ցոյցերէ, նա դիտէ, որ դառնութեան բաժակը լեցած է, և եթէ մէկ անգամ պայթում ունենայ՝ այլ ևս անկարելի կը դառնայ առաջն առնել:

Քաղաքի հայ բանտարկեալներէն 20-է աւելի ազատեցան Յուլիս 13-ին, որոնք 2-3 տարիէ վեր կը տառապէին բանտի մէջ զուր տեղ, տանելով անտանելի նեղութիւններ: Ամենքն ալ յճուած էին 3-6 տարի բանտարկութեան քաղաքական յանցանքով: Իտամի (մահաւան) դատապարտած երեք հայեր, որ արձակաձններու ընկերներ են, կը մնան տակաւին, բազմաթիւ շատախցիներու և ուրիշ գիւղացիներու հետ: Առևտակալ առաջարկած է թէ անոնք ոճրագործներ են և ոչ թէ քա-

դաքական յանցաւորներ: Առաջնորդ խիստ կերպով կը պահանջէ մնացածներու արձակումը, հեռադրած է պատրիարքարան և դեռ պատասխան ստացած չէ:

Բարձրագոյն հրամանով ազատեցան այսօր (18 Յունիս) 9 հատ ալ բանտարկեալներ, որոնց մէջն են և երեք մահաւան դատապարտաճանները՝ Գարեգին Բաղէշ-ցեան, Մկրտիչ Մաքսապետեան և աւերակցի հիւս Գեորգ: Շատախցիներ կը մնան տակաւին ամբողջապէս:

II

Սասունի մէջ կատարած սուլթանական գազանութիւններից յետոյ ամբողջ Վասպուրականը գտնուում է սարսափի, կոտորածի սպառնալիքների տակ: Երբ վերադարձան հայրարանցի ցեղապետները Սասնոյ վրայ կատարած արշաւանքից յետոյ, Բահրի փաշան կանչեց իր մօտ և սիրալիր ընդունելութիւնից յետոյ նորանոր հրահանգներ տալով՝ պատուով վերադարձրեց իրենց տեղերը:

Ինչո՞ւ այդպէս չպէտք է վարւի գազան Բահրին. չէ՞ որ ոչ միայն Սասնոյ աւարից մասն հանեց իւր համար, այլ և ցեղապետները բաւականութիւն տւին նորա գազանային կրքերին: Աւարը բաղկացած էր ոչ միայն սասունցւոց հարստութիւնից, այլ այն տեղ գտնուում էին Սասնոյ լեռնական Կոյս աղջիկներն ու կանայք: Իրանք բաժանուում են ցեղապետների մէջ և քիչ ժամանակից յետոյ շշուէ և տարածուում, որ քաղաքում ևս կառավարութեան պաշտօնեաների մօտ պահւած են Սասունից բերած ութ կոյս աղջիկներ...

Վառավարութեան վերաբերումը նոր իրախոյս, նոր հոգի է ներշնչում քուրդ ցեղերի մէջ, որոնք անպատիժ կերպով յարձակուում են հայաբնակ գիւղերի վրայ, թալանում, կոտորում, աւերակ գարձնում հայաբնակ գաւառներ: Հաստատապէս կարելի է պնդել, որ Վասպուրականում մի քանի գիւղեր միայն ազատ մնացին քրդական յարձակումներից: Հարիւրաւոր գիւղեր կողպուեցան, կորցրին իրենց ապրուստի վերջին յոյսը: Իսկ գիւղացոց բողոքները անլուծելի մնացին կառավարութեան առաջ: Սարսափը, երկիւղը սկսում է տիրել ամենուրէք: Սարսափ դաւաճներում, սարսափ նաև կենտրոնական քաղաքում՝ Վանում, ուր գտնուում են փաշան, եւրոպական տէրութեանց ներկայացուցիչները:

III

(Հ Ո Ղ Ո Խ Ն Դ Ո Ր Ր)

Կոտորում են, կողոպտում, աւերում են անտէր Վան: Այս դեռ բաւական չէ: Խլում, բռնութեամբ յափշտակում են հայի հողը, այն հողը, որ կուլտուրական ժողովուրդի տան սիւնն է, նրա ապաւէնը: Յափշտակել հողը, տալ տնտեսական ամենածանր հարւած՝ նոյն

բանն է: Եւ դարերով թափուում են հայ ժողովուրդի գլխին այդ անգութ հարւածները: Հայ, դու քա՛ր ես, թէ՛ ապառաժ, չե՞ս զգում մահ բերող դառն ցաւը: Շարժւի՛ր, շարժւի՛ր, թշուառական, շարժւի՛ր անգութ, քո այդ համբերութիւնը մահ է կտակում քեզ, չե՞ս զգում այդ: Եւ դու պիտի շարժւի՛ս, դանդաղիտ, և դու պիտի՛ բողոքես:

Խլում, բռնութեամբ յափշտակում են հայի հողը: Ահա մի գազանային օրինակ ևս—թշուառ Շահ-Բաղի գիւղի հողային խնդիրը: Մի քիչ համբերենք: Վասպուրականի մէջ Մոկս գաւառի, Շատախի, վերին Մահմուդիէի և այլն ամենալաւ հողերը գրաւած, յափշտակած են, Աղբակ գաւառի գրեթէ մի երեք երրորդական մասն յափշտակած են շէյխ Համիտն և բէգերը:

Տոսպայ մէջ Չորեանց գիւղի հողերը յափշտակեց մի ինչ որ շէյխ իւր կեղծ, շինծու քօջաններով, իսկ ամբողջ Խիզանի (Բիթ. վիլ.) պողաքեր հողերը կլանեց շէյխ Ջէլալ-Էդդին իւր ներկայ սերնդով: Իսկ այսօր, հենց վանեցիների քթի տակին, Վանի հողերին սահմանակից (հիւս. կողմի) Շահ-Բաղի բազմամարդ զուտ հայ գիւղի հողը կէսից աւել յափշտակում է մի ինչ որ Մէհմետ շէյխ: Որքան շատ են այդ լիբբ շէյխերը: Եւ ինչ իրաւունքով է խօսում այդ մոլեռանդ Մէհմետը: Ահա նրա հողային հաստատութեան թղթերը. — «Իմ հայրս, պապս 40 թէ 50 տարի առաջ այդ մեծ հողի կտորը տալիս էր շահ-բաղեցի Փանոս անունով պարոնին և նրանից տասանորդ ստանում, հետեւապէս և այն պատկանում է ինձ, որի համար ահա ներկայացնում եմ, իբր վկայ, այն ծերերը, որոնք տեսած կամ լսած են այդ աւանդական պատկանելութիւնը»: Եւ բաւական է այս խայտառակ ծիսակատարութիւնը տաճկական «արդար օրէնքի» առաջ: Իրաւունքը Մէհմետինն է: Իսկ խեղճ գիւղացիների հողային թղթերը, վկաները, տասնեակ տարիներով նոյն հողի մշակելը, գիւղացիների աղաչանք, պաղատանքը, նրանց զաւակների ու կանանց արտասուքը, դառն մորմոքը «արդար դատաւորների» առաջ մի կոպէկ չարժէ: Ապրիլ 7-ին գրեթէ շաբաղեցիները տարւեցան, որոշւեցաւ նաև այդ հողի վրայ գտնող հազարաւոր ծառերը, տասնեակ այգիները, 100-ամեայ կաղնիները քանդել և յանձնել գիւղացիներին, ինչ հակասութիւն: Այս խնդիրը ծագում առաւ 92 թւին, յուզւելով գրեթէ 2 տարի, ահա այս Ապրիլին իւր լուծումն պիտի ստանար:

Խլի՛ր, աւազակ, խլի՛ր ժողովուրդի հողը ամօթալի դատով, այդ մի չնչին բան է քո մեծ աւազակութիւնների շարքում: Յափշտակել գիւղացոց հողը նշանակում է նրան կենդանի գերեզման դնել: Բայց մեկը համողւած ենք, որ հայ ժողովուրդը մինչև այդ մահաւան դուռը լուռ չպիտի անցնի... շահ-բուղաղցիները որոշած են ամբողջ գիւղով, մեծից մինչև փոքր հրապարակով բողոքել այդ ցեղեկեան աւազակութեան դէմ:

Ն Ա Մ Ա Կ

Տ Ո Ղ Ր Ա Ն Ա Կ Ե Ր Տ Ո Ց

Հակառակ սուլթանի սաստիկ հրամաններուն, որ ասկէ մէկ երկու ամիս առաջ կը տեղար տեղոյս կառավարիչ Սըրրի փաշայի գլխուն, թէ ամեն ջանք ու ճիգ ի գործ դնել խաղաղութիւն պահպանելու և հայոց հետ համերաշխ ապրել, կարծես, — այս խօսքերը սխալ թարգմանած լինէին Սըրրի փաշայի կողմից, որ օր ըստ օրէ բռնութիւնները, գազանութիւնները ու անգթութիւնները կրկնապատկեց մեզ հայերուս, ինչպէս նաև բոլոր քրիստոնէից վրայ: Թուրք ամբողջ, որ սկզբից մի քիչ պատկառանք կը տածէր մեզ հայերուս, որ աւելի վախէն յառաջ կուգար, քան իրենց ազնուութենէն, — այժմ բոլոր թուրքերը, քիւրդերը, արաբներն՝ քաջալերելով կառավարութենէն և տաճիկ զինւորներէն, որ իրենց հետ հաւասար կը գործեն, ամեն տեսակ գազանութեան ու վայրենութեան միջոցներ ի գործ կը դնեն հայերուս վրայ, որ հայ տարրը ոչնչացնեն: (Տիգրանակերտու գաւառը բարենորոգիչ դաւաճներէն մինը լինելով, հայերու բաւական մեծամասնութեան թիւ մը կը կազմի. Ժրաջան հայ կառավարիչ-չխարենալ կարգելու համար՝ հայերը կոտորել ըսկած են և մէկ մէկին վերջացունել): Ամբողջ քաղաքը, ի բաց առեալ գիւղերը, որ աւելի գէշ են, սպանդանոց դարձած է, ամեն փողոցի մի անկիւն մի մարդ կսպանեն, շատեր կը խեղդեն, սարսափը մեծ է. ամեն դը՛ տունը փակած, աչք յառած, բարենորոգումներ աւած փալաս թղթի կտորին կսպանեն, իբրև վերջին յոյս. եթէ մի քիչ էլ ուշանայ Եւրոպայի բարենորոգումներու մուտքը ի հայաստան, մեծ ջարդ անխուսափելի է. տաճիկ մոլեռանդ ժողովուրդ՝ միացած քիւրդերու հետ, սոսկալի կերպով կատաղած է խածնում, պղծում են և բացարձակապէս յայտարարում են, թէ սուլթանէն հրաման է եկած, ամբողջ գեաւուրները պիտ ջարդենք:

Պատմեք մի քանի դէպքեր, որ այս օրեր տեղի ունեցան, որոնց ես ականատես եղայ սրտաճմլիկ:

Նագագալ Յովսէփ Սարրաֆեան անուն մի պատուաւոր անձնոր մինչ ցայժմ իւր արհեստով կապրէր, սակայն այս վերջին տարիներում բոլոր արհեստները և առևտուրները վատթարանալով ու դադարելով, ձեռքին փոքր դրամագլխով ընտանիքը ապրեցնելու համար փոքրիկ խանութ մը վարձած՝ լուսայափոխութիւն կընէր. իրկողն մը դրամները հետ առած տուն կը վերադառնար. փողոցի մը մէջ երկու զինւորներ յարձակելով վրան, երկու երկը սուրի հարւածներով գետին կը տապալեն, դրամը առնելով կանհետանան. անմիջապէս

մի քանի անձինք վրայ կը հասնեն, խեղճը հողեարքի մէջ կը փոխադրեն և կառավարութեան իմաց կուտան. կուգայ կառավարութիւնը, կսկսի քննել անգլայ հողեարքն, շատ մեծ ջանքեր կընեն խօսեցնելու, սակայն անկարող կըլինին, միայն յղարկեց՝ կարտասանէ և յով՝ հարցման չպատասխանելով, մի քանի վայրկեան վերջ կը մեռնի:

Կառավարութիւնը յղարկեց՝ բառը Սարգիսի կը թարգմանէ և անոր յաջորդ օրը նոյն փողոցի մէջ բնակող 45-50 տարեկան բարեպաշտ Սարգիսն ձերբակալել կուտայ. բայց մի քանի վկաներ կը հասնեն թէ յմեք տեսանք երկու երեք զինւորներ՝ այդ փողոցէն փախչելով, ուրիշ փողոց մը դարձան՝ թէ Սարգիս աղան և թէ վկաներն մահաւան կը դատապարտեն:

— Տեղէս՝ կէս ժամ հեռու Ալիփոլունար (ս. Ասուածածին) գիւղի քիւրդերէն մի խումբ զինեալ կը մտնեն ս. Ասուածածին եկեղեցին՝ եկեղեցւոյ բանալին պահանջելով. Պժամակոչը քաղաք դնալով, բանալին հետը տարաւ, կը պատասխանէ կինը. խեղճ ժամկոչին կինը շատ մը չարչարելէ ու անպատելէ վերջ, կը կոտորեն դուռները ու կը ջախջախեն պատուհանները և ներս կը խուժեն, անասնոց և մարդկանց աղբերով կը պղծեն բոլոր սրբութիւնները. եկեղեցին մէջ ցայժմ պղծած դրութեամբ գոց կը պահւի. պատրիարքարան բողբուեցաւ, դեռ ձայն մը չեղաւ:

— Քաղաքիս ոստիկանութեան հազարապետներէն մին, հայոց մեծ շուկային մէջ պտտած միջոցին, մի տաճիկ խնթի կը հանդիպի և կստիպէ հայ տէրտէրի պէս պատարագ ընել, և ապա հայհոյել կտայ եկեղեցւոյ, կրօնքի և ազգի, ինչպէս նաև հարուստ նշանաւոր խանութպաններից շատերի անձնակախին և ոչ զքից պատասխան մը կամ շարժում մը կելլէ, կարծես, քարէ արձաններ լինէին:

Ալ ո՛չ պատիւ մնաց, ո՛չ ամօթ, ո՛չ կեանքի և ոչ կայքի պահպանութիւն կը տիրէ. բոլոր խանութներն դոց, շատ մը խեղճ քիւլֆէթներ (ընտանիքներ) անօթի կը մեռնին, ամբողջ օրը 5-10 փարայի առևտուր չընողներ շատ կան. քաղաքէս մէկ կամ երկու ժամ հեռի չէ կարելի գնալ, կսպանեն, կը կողոպտեն և սոսկալի կերպով կանգամահատեն վայրենաբար, մեռցնելու չափ ծեծել, թալաններ, հայհոյանք սովորական բաներ են: Ոմանցից կուհարցնենք ինչո՞ւ այսպէս անգթաբար կը վարուէք. կասեն՝ յՔիւլֆէթի պու տըր, պէօյիւկի կերտէտըր, այս դեռ փոքրն է, մեծը ետն է. այս խօսքերէն կը գուշակենք ընդհանուր ջարդ պիտի տան քրիստոնէից, ինչպէս արդէն շատեր անամթաբար կը պուռան, կը պատեն թէ բոլոր գեաւուրները պիտ ջարդենք:

Յուսահատութիւննիս վերջին ծայր է. պայթումն երկու կողմից ևս տեղի պիտի ունենայ:

Երանի ձեզ, ով ազատ երկրի մէջ ապրող եղբայրներ, մոռացէք, մէկ կողմ դրէք անյաջողութիւններնիդ, որչափ ալ վշտերնիդ, ցաւերնիդ շատ լինէ, նորէն երանելի էք, որ ազատ կը խօսէք, ազատ կը շարժեք. արդեօք մոռցա՞ք ձեր հայրերն, ձեր քոյրերն ու եղբայրներն. գոնէ օգուտ քաղեցէք ձեր աղատութիւնից ու

օգնութեան հասէք մեզ կամ ձեռք կառկառեցէք, ալ համբերութիւնը ոճրապօրծ ութիւն է, անտարբերութիւնը մարդասպանութիւն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ս Ղ Ե Ր Տ Ի

II

Ձերբակալած եօթն հոգին, որ դորանոց տարին, հող նախ ուղեցին չւանով խեղդել բոլորը, բայց վերջիշեալ Համէ էֆ. չի թողներ, բանտ կը տանին. հոն նորէն կը տանջեն, այնքան կը զարնեն, որ շատերու բերնէն արիւն կը վազէր, երկու օր աղէկ մը չարչարելէ և տանջելէ ետև ծանր կաշառ առնելով, կարծակեն, սակայն Ատրմոն մի շարաթ կը բանտարկեն, և աւելի շատ ստակ կառնին իրմէ: Զինւորները և տաճիկները ուզածնին ըրին, թալանեցին, կողոպտեցին ամեն ինչ, դարձեալ ազատեցան. իսկ հայերը ծեծը կերան, շատերը վախէն մեռան, մօտ երկք ամիս 300-ի չափ հայ հիւանդ էին վախէն, և սակայն դուրսը ոչ ոք տեղեկացաւ, այնպէս ծածկեց սուլթանի բարբարոս կառավարութիւնը:

Անցեալ տարի Իսայ Ըպէ Համատըլ-Հաճի անուանով անպիտան տաճիկը կապալով առեր էր Սղերտի ամբողջ այգիներուն տասանորդը և փաշային հետ միանալով, սկսաւ ամեն տեսակ հարստահարութիւններ ընել, այգիներուն վրայ ծանր տուրք կը դնէին, այգի չունեցողէն ալ որպէս թէ սխալմամբ կառնէին: Հաննոյ Մ. Իւսէֆեանին այգիին վրայ տուրք դրին 30 զուռ, որ այգիին մէջ տաւ, բայց ետէն երկու անգամ ալ զարնելով, չարչարելով թէ զինքը և թէ որդին, 60 զուռ ևս առին: Մ. Հաննոյեանին վրայ 4 զուռ տուրք դրին և 20 զուռ առին: Ասատ Մանուկեանին վրայ 3 զուռ տուրք դրին և 13 առին. այն ալ ինչպէս—մայրը չարչարելով և վերմակը ծախելով: Ակոբ և Աւէ երկու եղբարց այգիին վրայ դրին 65 զուռ տուրք և առին 115 զուռ և այլն, և այլն: Այսպիսի շատ մը դէպքեր կը լլան, տաճիկը կաշառներով կազատի, իսկ հայը կը, հեծէ ու կը հեծէ:


Սղերտի մէջ կայ հայ ընտանիք մը, որու մասին ամեն սղերտացի երախտագիտութեամբ կը խօսի, այդ է Խօջա Մուսայ Տէօյլէեանին տունը: Ահա քանի տարի է, որ սղերտացոց սիրելի Խօջա Մուսան մեռած է, պաշտպանելով իւր գիւղը Գիւղալար—քուրդերուն յարձակմանց դէմ, անոր մահամբ Սղերտի հայ ժողովուրդը կորսնցուց իւր ամենաճարտար և ամենաազդեցիկ ազգայիններէն մէկը: Հիմա անոր եղբայրը Խօջա Յա-

կոբ անոր տեղը կանցնի, Խարզանի ամբողջ հայ ժողովուրդը անոր պաշտպանութեանը տակ էր, քիւրդերը միշտ կը յարձակէին թէ՛ իրեն կաւածներուն և թէ՛ գիւղացոց հողերուն վրայ, արտերը կրակ կուտային, ցորենը կը գողնային, և ինքը միշտ կազմ ու պատրաստ էր անոնք ետ մղելու, եթէ կանայք, աղջիկներ փախցնէին, անմիջապէս կերթար, յետ կանչէր, եթէ մէկուն ձին, ոչխարը, կովը գողնային, կերթար կազատէր: Տաճիկ կառավարութիւնը շատ ծուռ աչքով կը նայէր անոր, և ամեն միջոց գործ կը դնէր մէջտեղէն վերցնելու, ինչպէս եղբայրը Խօջա Մուսան վերցուց: Օր մը ոստիկանները առանց մուխթարի անոր տունը մտան, խուզարկեցին և այնալի հրացան մը գտան, ինքը բարկացաւ, ինչ իրաւունք ունիք տունս մտնելու առանց մուխթարի, և կատաղութեանէն ինքն ալ սկսաւ հայհոյել. կառավարութիւնը բանտարկեց զինքը, 200 ոսկի կաշառք տաւ Խօջա Յակոբը, բայց տաճիկ կառավարութիւնը տակաւին չը կշտացաւ, և մինչև որ բոլորովին չծրծէ, չանչնչացնէ, չի պիտի արձակէ, հազիւ հազ ձեռքն ինկեր է իւղալից պատառ մը և խորամանկ ընչաքաղց կառավարութիւնը ձեռքէ չձգեր: Իսկ երկիրը, Խարզանի որբ մնացած հայերը... անոր բանտարկութենէն ի վեր, ահա մէկ ու կէս տարի, քուրդերը սանձարձակ, առանց ո և է արգելքի և խոչնդոտի տակն ու վրայ ըրին երկիրը, ժողովուրդը անպաշտպան, անօգնական, կը ձգէ երկիրը և կը գաղթէ. Գիւղալար, Բարայէ և այլ հայաբնակ բազմամարդ, այլ և օդատուն—ու գեղազարճ բնութեամբ գեղուն գիւղերը այսօր անմարդաբնակ են գրեթէ...

Շատ շատ նեղութիւններ, հարստահարութիւններ կը լլան, մահաբազաններ կը դարձնեն, աղջիկ կը փախցնեն, գեղեցիկ տղայ կը լլկեն, կով, եղ, ոչխար, ձի և այլն կը գողնան, կը տանին, զարհուրելի տուրք կը դնեն, տասանորդը դնելէն ետև կաւեցնեն, տունը, տեղը, կահ կարասիք, ունեցած-չունեցածը կը ծախեն և տուրք կառնեն. ամեն օր տուրք կը ժողովեն, կը ժողովեն ու կը ժողովեն, երբէք չհատնիր, այս տարի անցեալ տարւայ տուրքը կը ժողովեն, և քանի որ այսօր Պոլսոյ վարչութիւնը արագօրէն հեռագիր հեռագրի վրայ կը զորէն և կշտայեցնէ տուրքերուն, աւելի, կամ աւելի ձիշտը, թալանի հաւաքումը, ալ երևակայեցէք հիմա մեր աղքատ և յետին չքաւորութեան հասած ժողովուրդին վիճակը, կը ծեծեն, շատերը արիւն կը թըքնին, կը հիւանդանան և կը բանտարկին, որ բանտի ծանր կապանքներու տակ և խոնաւ, մթին ու ամեն տեսակ կեղտոտութիւն բուրոզ բանտին մէջ բժշկելին: Ինչ է այն գիւղացիին վիճակը, զգացե՛ր էք երբէք (բայց մենք աչքով ենք տեսեր և ականջով լսեր), երբ նորայաւոյց գարնան հետ կը զարթնի, ուրախ երգերով, գոհաբանական աղօթքներով կը դիմէ դէպի բնութիւնը, կը հերկէ, կը մշակէ անոր ամենամեծ պարգևը, երբ հասուննայ, կը հնձէ, կը բեռցնէ իր հաւատարիմ իջուն կամ մանաւանդ եղին վրայ ու քաղաք կը տանի, կը ծախէ, ստակը գրպանը կը դնէ, հաւատարիմ կեն-

դանին առջևը նետած գոհ սրտով, ուրախ և զւարթ, հրգեղով և պարելով ճամբայ կիյնայ, քաղցր ապագայի վրայ կը մտածէ, և յանկարծ, զինուորած քուրդը վրան կը յարձակի... մարդը կը մնայ գետին, մծրմէն ծնւածին պէս մերկ, անշնչացած: Այս է մեր բոլորիս գրուածիւնը, վիճակը, չունինք և կարծես՝ թէ իրաւունք ալ չունինք ունենալու ուրախ օր՝ վայելելու բընութիւնը, որուն կը ձգտէ ամեն մարդ:

Ի վերջոյ քանի մը խօսք ալ տաճիկներուն մասին: Իսկապէս ասած, ես կը մեղքնամ այս թշուառները, թէև անոնք հայը կը կողոպտեն, կը հարստահարեն. բայց եկուր տես, երբ իրենք ալ կը կողոպտուին և կը հարստահարուին իրենցմէ աւելի բարձր գանուղներէն— էֆէնտիներէն, պէկերէն, ազնւականներէն. և, մեծ էջը ատուր թողուցինք, տէրութենէն, հոգեւորականներէն: Ասկայն անոնք տաճիկները—միշտ սնանելով հոգեւորականներու փտած և նեխած գաղափարներով, կինսական հայեացքներովը, միշտ տգէտ կը մնան, տէրութեան ուզածն ալ այդ է, տէրութիւնը, որ իսկապէս աւագակութիւն է, բարբարոսութիւն է, կը ծծէ ու կը ծծէ անոր մարմինն ու հոգին, շոյելով ու շողբորթելով...



ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պատմէն մն պաշտօնական զրութնան)

ԱԳԴԱՂ-ՄԱՏԻՆ. Ագդաղ Մատենի յոյներն Փէհլեման օղլու Թատոր իր պարտիզէն քակած ծառերուն հեղինակներն բռնելու համար՝ մուծի մէջ սպասած ատեն, երեք հատ զինուորներ պարտիզէն ներս կը մտնեն՝ պատին վրայէն անցնելով. օգնութեան հասնող ժողովորդին շնորհիւ, զինուորներէն երկուքը կը բռնեն, իսկ երրորդը կը յաջողի փախչել և կերթայ եղելութիւնը Միւլազիմ Հասան աղային կիմացունի: Հասան աղան Թատորին տունը պաշարելով՝ կուրի կսկսի նախապէս Սանալդ Էմինի էֆէնտիին եղբայրը Պարաշ գլխէն և ուրիշ 3-4 անձ ալ տարբեր տեղերէ ծանրապէս կը վիրաւորուին սւխններով: Հասան աղան բռնած զինուորները առնելով, կը մեկնի: Գայմաբաժին տեղեկութեան վրայ Եօզղատի թաղապետական բժիշկ տօք. Շիրիմեան կը ղեկի, որ գալով վիրաւորներուն սւխնով վիրաւորած հլլալին կը հաստատէ: Նոյն գիշերուան մէջ Մատենի ժողովրդի զգացած տաքնապը բացատրել կանկարողնամ:

Հասան աղան երբ Թատորի տան կը մտնայ՝ կրակի և յարձակման փողերը զարնել կուտայ: Զէրքէզ-

ները գիւղի մը մօտերը Փիրանեան Արթին աղային ծառան, կիրևնցի Գէորդը կը կողոպտեն, գրաւելով անոր 12 ոսկին և մօտ 8 ոսկիի արժեցող իրեր: Գարա-Մաղարա դաւառակի միւրիւրը նոյն գիւղի մէջ սենեակ մը նստած հանդիսատես կըլլայ այս դէպքին, ոչ ոստիկան մը և ոչ ալ գիւղացի մը կը ղեկէ այս դէպքը արգելելու և կամ չարագործներին հեռացնելու համար. հաւանական է, որ այս աւագակ չէրքէզները յիշեալ Մանչար պէյին ստորատասները էին:

ԳԱՐԱՃԱ-ՎԵՐԱՆ Աղեղեյէ դաւառին կից՝ Գարա-ճա-Վերան անուն յոյն գիւղին մէջ արիւնաֆհեղ ընդհարում մը եղած է:

Գարաճա-Վերանի մօտ Փալաս գիւղի իսլամները զինուած կը յարձակին վերոյիշեալ գիւղի վրայ, երբ տղամարդերը արտերը կը գտնուին եղեր. կանայք վախերնուն տուններնուն կը քաշին, թուրքերը տուները մտնելով՝ շատ մը կանանց պատիւները բռնաբարելէ վերջ, բաւական իրեր ալ կառնին. եկեղեցին մտնելով՝ կանթեղները կը կտորտեն և Նիքօլա քահանայն խեղդելու համար կը պառկեցնեն, բայց իսլամի մը շնորհիւ կը խալին, որովհետև անոր բարեկամն է եղեր: Այս եղելութիւնը իմանալով, տղամարդեր դաշտէն վերադառնալով՝ կուրի կսկսին: Լսածնուս նայելով, 10-15 սպանւած և շատ մը ալ վիրաւորներ կան: Զինճիտէրէի միտրօպօլիտը ամեն պաշտօնական տեղեր գիւնուցները բրած է և կընէ:

ՔԻԻԶԻԿ-ՉԱԹ. Գաւառնուս մէջ աղքատութիւնը անբացատրելի աստիճանի մը հասած է: Կիները լեռներէն խոտ հաւաքելով, տնական պէտքերու կը գնան, բայց այնպիսի ժամանակի մը մէջ կապրինք, որ հնար չէ անվնաս գեղին կամ քաղաքին եղբրը ելլել կարելի ըլլայ: Քիւչիւք-Չաթէն քանի մը կիներ խոտ հաւաքելու համար գիւղէն դուրս կելլին: Քէօքրիւճիզ գիւղէն Օղլան հանունով թուրք մը ասոնց վրայ կը յարձակի և Ծաղիկեան Կարապետի կնոջ պատիւը բռնաբարելէ վերջ՝ աջ ձեռքին 4 մատերը կը կտրտէ:

Լսածնուս նայելով, կառավարութեան բողոքած է, բայց ինչ օգուտ, որ կամ մէկ երկու օր կը բանտարկեն և կամ բնաւ չեն հարցաքննիր:

ՍՈՒՆԿՈՒՐԼՈՒ. Խեղդելով ջաղացքի մը անիւյ տակը ձգւած յոյն նիկօլային սպանիչները գտնւեցան. մէկը Սունկուրլէն ձիրիտ օղլու Արիք, միւսը Սունկուրլի գեղերէն Ինձէ օղլու թուրք մը է: Անոնց խոստովանութեանը նայելով, այս ոճրագործութիւնը թշնամութեան և կամ շահու համար չէ, այլ միայն կետավուր մը սպանելու հաճոյքին համար ըրած են. արդէն զօհը չեն ձանձնար


եղեր, և վրայէն ալ լոկ 6 փարա գտնուել է: Մեղիք Գարբիէլ պէյն բանտէն արձակուած չէ: Ասոր կինը սպանուած է տաճիկի մը ձեռքով: Բայց այրը բանտարկուած է, իբր մարդասպան: Գայմագամ Գարբիէլը մահապարտ ընելու համար վերջին ծայր կը խորհի. Հասան և Նուրի չափուշ անուն երկու պահակներ կանչելով՝ այսպէս կը պատելիք. «Գիշերը ժամ 4-5-ին ատենները, տուն գալով զիս փնտոցեք և բանտէն բերելիք մարդերնուդ ըսէք, որ երբ քովս գան, ըսէք թէ մենք ականջովն լսեցինք, որ Գարբիէլը քունին մէջ կը զառանցեր, թէ առաջ սխալեցայ, պէտք էր որ կինս սպանէի»: Պահակները այս խրատներ մէկ քանի բանտարկեալներու տուած ատենին հոն գանուած իսլամ բանտարկեալ մը կը ըսէ. և եղելութիւնը ամբողջ բանտարկեալներուն կը հաղորդէ. այն ծրագրին այսպէս պարապի ելելը տեսնելով, գայմագամը կը բարկանայ և պահակներ պաշտօնանկ կընէ: Գուրպաղօյն յոյն երիտասարդ մը՝ սպանեալ Ափրիս չափուշին Հեղինէին (մեռեալ կինը) տունէն ելլալը տեսած ըլլալով՝ դատարանի մէջ ըսաւ և հինգ տասը գիւղացիներու մէջը Ափրիս չափուշը ճանչցաւ, զինուորի լաթեր հագցուցին՝ դարձեալ ճանչցաւ թէ և, բայց չափուշ և Գարալի ոչ լու Հիւսէյինը ազատ արձակեցին. իր ջանքը, հոգը Գարբիէլը դատապարտել տալն է:

* *

ԵՕԶ ՂԱՏ.—Եօզղատի շուրջը տիրող անապահովութեան, կառավարութեան խժոժութեանը պատճառով հայերը այս գուժի ժամանակին տուններին քաշած մնացած են, քաղաքին մէջ աղքատներու հաշիւը չկայ, միւս կողմէ գիւղերէն ալ խուժք խուժք կուգան, ճամբուն վրայ հանդիպած հայ մը իբր յեղափոխական կը ճանաչուի և նեղութիւններ տալով ստակներ կառնուի:

* *

ՄԱՀՏԱԿ գիւղից.—Գիւղիս մէջ դտնուող քերդաց պէտ, որին անունն է Սէյիտ պէյ քանի մը սրիկայ քերդերով կը յարձակի եկեղեցու վրայ. կրակ արձակելով, մէկ քանի մը անձանց կը վիրաւորի և ամենքն ալ գուրս կը վռնդէ Խեղճ քահանան կինի անպիտանի ոտքը, բայց ի զուր. եկեղեցույ դուռը կը բացի, բանալին կառնի ու կերթայ գիւղ—իր դաշնակցի մօտ: Յետոյ կը կանչէ գիւղի մէջ եղած դպրոցի ուսուցչին և կսպաննայ. հայ վարժապետին ու կըսի՝ այս գիւղէն պիտի հեռանաս, այս դպրոց չի պիտի ըլնի, եկեղեցին փակելով, դպրոցն ալ կը փակէ ու այսպէս կը հեռանայ գիւղէն:



ԳՂԻԻՑ. Գղի Գասապայէն 2 ձի և 3 ջորի Սէյաէ-Գասրմ ըսած լեռնէն՝ քաղաքէն երեք քառորդ ժամ

հեռի, խուպատցի աշիրէթէն տարւեցան անդառնալի, վնաս օսմ. 4-5 ոսկի:

—Սերկէիլի դիւղացի Արսլանեան Վարապետին ձին 15 ոսկույ արժեքով, գիւղէն քառորդ ժամ հեռի արօտատեղիէն լոյս ցերեկով խուպատցի քուրդերն տարին:

—Խուսիսեցի Փոստայեան Խաչատուրի մէկ կողմ և երկու եզն նոյնպէս խուսիսեցուց Բարթողեան ձորէն նոյն աշիրաթն զարկաւ տարաւ:

—Խուրս-գոմցի թուրք Հաճի Մուստաֆային եղբայրը Բարթողեան ձորը թալնելով, խուպատցիներ ձին տարին լոյս ցերեկով. կառավարութիւն միայն սոյն անձի բողբոջ լսելով՝ կոճակի միւտիւր Թէսուլ աղայի թէզքէրէ գրեց. ողորմելի Մուստաֆան յոյսը դրած այդ թէզքէրէին վրայ գնաց միւտիւրի մօտ և անկից գողերու տունը. իւր խոզաքին, շալվարը և զգեստները կը տեսնէ քուրտին վրայ, կուլայ, կաղաղակէ. անամօթ քուրտը կուրանայ իւր գողութիւնը և կսպաննայ իւր զըրպարտութեան վրայ, յուսահատ Հաճի-Մուստաֆայ տուն դարձաւ, անիծելով կառավարութիւնը և հայհոյելով պաշտօնեաները:

—Վուան ձորէն, որ Խուրսէն կէս ժամ հեռի է, Մահտեսի Նազարէթ Փոստայեանի 2 կով և մէկ եզն տարին, ցերեկ ատեն:

—Ամսոյս մէջ հասնանցի աշիրաթէն Օզոյի տղան 25 ձիաւոր համախիտով՝ հարուստ Խօշմաթլեաններու տունը եկան. գիւղին մարգերը բռնութեամբ քաղեցին, գիւղն ամբողջ ահով լեցուցին ու առաւօտ մեկնեցան՝ մուրհակաւ 25 ոսկի վերցնելով:

—Խուպատցի աշիրէթին այս կատղիւր յառաջ եկած է տեղուոյս գայմագամին յատուկ թելադրութենէն. կոճակի միւտիւր Թէսուլ աղան, որուն արամագրութեան տակ կը գործէ համարձակ սոյն աշիրէթն, այժմ 2 բաժնի խմբով կը գործեն՝ մին 25 անձով, որ գողութիւնները տեղաւորելու պաշտօն ունի, միւսն 30 անձերով՝ ցերեկեայ հրոսակ՝ տեղաւորուած Բարթողեան ձորին անտառը: Կառավարութիւն կը ըսէ այս ամեն, բայց կը ըսէ. ամեն օր անպակաս են սոյն գունակ դէպքեր, զորս միառմի կը տեղեկագրեմք:

—Տէվրիշի տղայք անուն և Համիտլէ հեծելադուռներն պատկանող մի քանի քրդեր՝ 30 զինեալ ընկերներով, լոյս ցերեկով կը յարձակին 2իֆթլիկ գիւղի վրայ, պահանջելով գիւղացիներէ այն երիտասարդը, որ 3 տարի առաջ թրքացած և մօտերս դարձեալ եկած է հայ եկեղեցույ գիրկը, բայց իւր կեանքի ապահովութեան համար, 3 ամիս առաջ ծպտեալ Բասեն մեկնած է: Գիւղացիք եղելութիւնը իր ճշտութեամբ կը պատմեն, բայց զարմացած գազանները կը վիրաւորեն 20-ի մօտ հայեր, որոնցմէ ոմանք ծանր վնաս ունին ու կը մեկնին, ի լիոյ իմացանք, որ վիրաւորք Վարին բողբոջու գացած են. արդիւնքը դեռ չգիտենք:

—Առ էք գիւղացի 2 հայեր, իրենց 2 ջորիները ել պէկու գետեզոր արածած ատեն, Միատուն ըսած գոմերը բնակող բնիկ գասապացի թուրքերու կը հանդիպին, որք երկու ջորին գետին ամենէ վտանգաւոր հոսանուտը կը ձգեն, տեղերուն ալ խիստ կը գանա-

կոծեն. մի ընկեր գլուխ երես արիւնլայ վիճակի մէջ քաղաք եկաւ և բողոքեց առաջնորդ Տօր. մարդ ղըրկւեցաւ միւս ընկերոջ ետեւէն, պատգարակով բերին:


—Խուստի մէջ հարստահարութիւն.— Մասը գանցի 18 զինեալ քուրդեր գիւղս եկան՝ իրենց Միրզ Ալիի տղուն Աղա Սիւլէյմանի հետ. Տիլպէրեաններու վարայ, Մըրճօյեաններու և Էլէսիկեաններու տանեցոց վրայ ալ լուտանք, ծեծ, բռնութիւններ ի գործ դրին. բայց վերջապէս ժամանակիս դէպքեր զիրենք վհատեցուցին, լոյս ցերեկով թալանի սկսիլ, շատ մը սպառնալիքներ ընելով մեկնեցան ի Սերկիէի գիւղ, ուր նոյն գիւղի Արսլանեան Կարապետի ծառաստանէն 150 բարդի ծառեր կեղեկելով, 2 հրացանի գնդակ դուռը խրեցին և տան դրան առջև մի տաճիկ գերեզման կապելով, մեկնեցան:

—Թալան ի Կաղկեւեկէն.— Գիւղիս բնակիչներէն Պաղտոյեան Փիլիպպոս անուն մէկը Բալուէն ապրանք առնելով դարձած ատեն, 6 զինեալ քուրդեր կը պաշարէր Կաղ նահիւթի մէջ. տղան փախչելով կազատուի. 1000 ռ. ապրանք տարին: Սոյն դէպքի դրդիչն ու հեղինակը Կաղի Միւսիլը՝ Ուլաշ-զատէ Սաղը Մէհ-մէտ աղայի տղայ Քիւլչիկ աղան է: Կառավարութեան դիմեցաւ, բայց անօգուտ և անլսելի: Այժմ տեղոյս կառավարութիւնը «արզուհայի» իսկ ունկնդրութիւն չունի, երբ բողոքը թալանի և հարստահարութեան դէմ է: Գաւառիս ընդհանուր վիճակ անապահով է և թատր մը սոյն գունակ դէպքերու:



ՌՇՏՈՒՆԻՔ.— Կուլիխան բէգի որդի Իւսուֆ բէգ (Խաչատուր կաթողիկոսի հարս փախցնողը), որի գէմ խիստ գրգռած էր նարեկայ վանահայր ծ. Մատթէոս վարդապետը, որովհետև այդ լիբբ քիւրդը մօտիկ անցեալում նոյն գիւղի դպրոցի մի աշակերտի, 12 տարեկան հասակի, լլկած էր բռնի, ցերեկով վանահօր բացակայութեանը, գալիս է կրկին նարեկ և առաջարկում հայր սուրբին իր սենեակի դուռը բանալ, թէ ինքն այնտեղ ուզում է օղի խմել, մտրուքներ կանչել և քէֆ անել: Հայր սուրբն խիստ կերպով մերժում է: Իւսուֆ բէգ սպառնալիք տալով հեռանում է: Օգոստոս 6-ին միւս օրը Իւսուֆ բէգ ուղարկում է մի անծանօթ քիւրդ, որը մօտենալով դարձեալ հայր սուրբին, ասում է, որ սենեակի դուռը բանայ, իրան բան ունի ասելու: Հայր սուրբ պատասխանում է, թէ ինչ որ ասելու ես, այստեղ ասա. քիւրդը նորից պնդում է, հայր սուրբը կրկին մերժում է, բայց մի կերպ քիւրդին յաջողում է մանել սենեակը. մտնելուն պէս վերջինս հանում է խանջալը և հարւածում հայր սուրբին. դիմադրում է քաջ կրօնաւորը և դեռ երկրորդ հարւածից չլուսահատուած յաջողում է խանջալը քրդի ձեռքից խլել և մի հարւածով նրան փուռեցնել գետին: Ծ. Մատթէոս վարդապետի վէրքերը մէջքի վրայ են և վտանգաւոր չեն: Քիւրդը ծանր վիրաւորւած է: Վարդապետն այժմ փոխադրւած է Աղթամար. դատ կայ:

—Բահրի փաշան պաշտօնանկ եղաւ, կորուեցաւ, ուտելով շատ հայերի դրամները:



ՄԱՏԻՆԻՑ. Ճիշտ այս պահուս վստահելի աղբիւրէն կիմանանք, թէ 10-15 օր առաջ Մարզանի հրդեհը պատահած օրը տեղոյն քաջալերւած մասնիչներէն հաճի Սարգիս աղա Քիրէմիտեան իր տանը մօտ դաշոյնահար մեռած գտնւած է ի մեծ վարձատրութիւն կամ յապաշխարութիւն իւր վատ ջանից և ի սարսափ իւր նմանեաց: Գործադիր ահաբեկիչները ազատ ու ապահով են: Ասիկա 8-երորդ անգամն է, որ մարզանցիք իրենց մասնիչները սպանած են՝ 6-ը հրապարակաւ և 2-ը գաղտնի:

**

Երոպական մամուլը, նոյն իսկ անգլիականը, Կ. Պոլսի վերջին դէպքի առթիւ վերին աստիճանի կծու ու յարձակողական դիրք բռնեց դէպի հայկական խնդիրը և դէպի հայերը մասնաւորապէս, և նա այն աստիճան հեռու գնաց, որ սկսեց Սասունի կոտորածն անգամ կասկածանքի ենթարկել: Այս անսպասելի փոփոխութիւնը մի մեծ հանելուկ էր դարձել շատերի համար, նամանաւանդ որ Անգլիական նաւերը մօտեցել էին Գարդանելին և նաւային ցոյց էր սպասուում. ահա ուր էր հասել դիպլոմատիքական յարաբերութիւնը այդ ժամանակամիջոցում: Բայց և այնպէս դիպլոմատիան ու նրա օրգանները պարտք համարեցին դատապարտել հայերին և Տաճկահայաստանում տեղի ունեցած բոլոր կոտորածները համարել հայերի սարքածը՝ Եւրոպային զբաղեցնելու՝ իրենց իսկական շահերին ծառայեցնելու դիտումով: Եւ այս անողները մի քանի ժամանակ, նոյն իսկ մի քանի օր առաջ սպառնալիքներ էին տալիս սուլթանի կառավարութեանը, նրա կատարած ամեն տեսակ ոճրագործութիւնների համար: Ո՛հ ժամանակներ, ո՛հ մարդիկ:

Մենք կը վերագառնանք այս խնդրին:

**


Թէև «Դրօշակի» 15-16 համարները հրատարակուած ենք միասին, բայց և այնպէս հետեւեալ 17-րդ համարը լոյս կը տեսնի իւր ժամանակին՝ նոյեմբ. 1-ին:

**

Ներկայ 15-րդ և 16-րդ համարները մամուլին յանձնելու ընթացքին ստացանք Գաշնակցութեան Կ. Պոլսի Կենտրոնական Կոմիտէի հրատարակած պրօկլամացիան, որ և զետեղում ենք ստորև:

Մանրամասնութիւնները և այլ տեղեկութիւնները հետեւեալ համարում:

Թ Ռ Ո Ւ Յ Ի Կ Թ Ե Ր Թ



№ 1 Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն. № 1

24 Սեպ. 95 4. ՊՕԼՍԻ 24 Սեպ. 95

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԵԻՆ

Հայ եղբայրներ եւ Քոյրեր,
Հայութիւնդ ճգնաժամի մէջ է:

Հնչակեաններուն ձեռքով կազմակերպուած Սեպտեմբեր 18-ի խաղաղ Յոյցք, որով կուզէին Մայր-Հայրենիքի ահեղապէս անտանելի վիճակը վերջին անգամ հաւաքարար պարզել Թուրք կառավարութեան եւ Եւրոպայի առջեւ, — այդ ջոյքը կոտորածի եւ անմիտ ու զազանային վրէժխնդրութեան աւիթ մը եղաւ Թուրք բռնապետութեան համար. ոստիկանութիւնը ինքն էր որ զինեց ու զբռնեց հայերուն դէմ մայրաքաղաքիս սօֆիթաներն ու Թուրք խուժանը:

Այլ համբերութեան չափն ու սահմանն անցած է. երբ կառավարութիւն մը կը խաբէ մեզ ու Եւրոպան բւեքի քան տասնվեց տարիէ ի վեր, երբ կառավարութիւն մը լքուաբար կուրանայ Սասունի ջարդը եւ կը խաղցնէ Եւրոպան տասներեք ամիս անընդհատ, երբ կառավարութիւն մը նոր Սասուններ կ'ստեղծէ Երզնկայի, Կամախի, Եսպին — Գարահիսարի եւ Հայաստանի բոլոր անկիւններուն մէջ եւ նոյնիսկ Պօլսի մէջ Եւրոպայի աչքին առջեւ բնաջինջ բնել կը ջանայ իր տարրական իրաւունքները պահանջող ժողովուրդ մը — ալ ինչ կ'սպասէք. այդպիսի կառավարութենէ մը. Ո՛հ, ալ անցաւ խոստումները ժամանակը, ալ չը խաբուինք մենք սին խոստումներով եւ անարժէք թղթերով, իրական գործ մը պէտք է մեզ. ապահովութեան եւրոպական, երաշխիք մը Թուրքերուն հայակործան սիսդէմին դէմ: Թո՛ղ զուր չանցնի հերոսներուն եւ Պօլսի փողոցներուն մէջ ինկած անմեղ զոհերուն արիւնը, զոհեր որոնց դիակները Մարմարայի խորերէն բողոք ու վրէժ կը պահանջեն:

Ձը խաբուինք խոստումներէն. մինչեւ որ մեք պահանջներուն Եւրոպական պետութիւններու կողմէն գոհացում չտրուի, խստիւ կը հրամայենք որ ամեն մարդ գոցէ իր խանութը, ոչ ոք կլլայ իր պատասպարանէն, ոչ ոք իր զէնքը վար դնէ, որովհետեւ նորանոր ջարդերու պատրաստութիւններ կը պահանջին Թուրք խուժանին մէջ, որուն դէմ կառավարութիւնը, եթէ ուզէ իսկ՝ որ յիմարութիւն է հաւտայ՝ անզոր է մեզ պաշտպանելու:

Եղբայրներ եւ Քոյրեր:

Հասած է վարկեանը, երբ պիտի ապացուցանէք, որ լաւագոյն կը համարիք դիւցազնաբար մեռնիլ, քան վատաբար փճանալ Մոնղոլիոյ անապատներէն փախած մարդակերպ զազաններուն ճիւղաններուն մէջ:

ՄԱ՛Հ կամ ԿԵԱՆԻՔ:

Վա՛յ անոր որ չաջակցիր յեղափոխական բանակին. Կեցցէ՛ Յեղափոխութիւն:

Դաշնակցութեան Կարնոյ Կենտրոնական Կոմիտէն՝ լուր առնելով Շաքիր փաշայի Հայաստան դալու մասին, պրօկլամացիաներ Տրատարակելով, վաղորօք ցրել է դաւառները, որ «Հայաստանի այդ Բարեկորդիչ-Կօմիտէին» ընդունեն ըստ արժանոյն:



Բուրգասի «Աքանագետն», Ռուշուկի «Հայկական Միութիւն», Եամպօլի «Սասունեան» և Ալիմլայի «Օժանդակ» ընկերութիւնները խնդրում են յայտնել, որ իրենք միանալով Հայ Յեղ. Դաշնակցութեան հետ, կազմում են առանձին առանձին կօմիտէներ:



Տերի խիստ սղութեան պատճառով Սասունի կոտորածի վերաբերեալ պաշտօնական դօկումէնտները և աղերսագրերը անկարող լինելով զետեղել «Դրօշակի» էջերում, մենք նրանցից կարևորները կը Տրատարակենք առանձին գրքոյկով:

ՆՆՆՐԱՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱԿ

Հայ Յեղ. Դաշնակցութեան Կեդրոն. սնդուկի մէջ ստացւեցան.

Թամբրզէն Հայկ 30 թուման, Հաւատացող 10 սկի, Զաւայէն Հով 25 անգլ. սկի, Արմաւիր՝ Վարդան Դերձակեանէն 5 սկի, Բաղդադ 50 Ֆրանկ, Աղթոռ մը 30 Ֆր., Պուլկ. Ռոստոմ-Շաւարշ 20 Ֆր. և 460 Ֆր.: Նիզակ քաղ. սնդուկի մէջ ստացւեցան.

Յչ. 40 դահեկան, Յո. 60 դ.՛, Կ. Խ. 50 դ.՛, Կ. Հ. 50 դ.՛, Խ. Հ. 40 դ.՛, Ս. Դ. 40 դ.՛, Գք. 40 դ.՛, Մ. Ժ. 50 դ.՛, Մ. Աղ. 50 դ.՛, Հ. Ա. 40 դ.՛, ԳԼ. ք. 40 դ.՛, Ս. Ս. 10 դ.՛, Գ. Ո. 50 դ.՛, Գ. Ա. 50 դ.՛, Պ. Մ. 60 դ.՛, Գ. Հ. 30 դ.՛, Մ. Հ. 30 դ.՛, Ա. Հ. 20 դ.՛, Պ. Խ. 10 դ.՛, Գ. Խ. 10 դ.՛, Խ. Ա. 60 դ.՛, Մ. ք. 40 դ.՛, Մ. Ի. 20 դ.՛, Մ. Թ. 20 դ.՛, Մ. Գ.՛. 20 դ.՛, Մ. Թոր. 20 դ.՛, Յ. Տ. 20 դ.՛, Ա. Ա. 10 դ.՛, Ա. Պ. 40 դ.՛, Մ. Կ. 10 դ.՛, Մ. Տ. Յ. 40 դ.՛, Թ. Գ. 10 դ.՛, ՕՖ. և Մ. Մ. 300 դ.՛, Գ. Մ. Մ. 95 դ.՛, Անվախ խմբից 200 դ.՛, Միութիւնից 100 դ.՛:

Շվ. Ժ. ք. Օր. Ե. 13 Ֆր., Ար. Մ. 6 Ֆր., Ար. Գ. 5 Ֆր.:

Ամերիկ. Լօվէլ ք.-ից՝ Յ. ճ. 1 դօլլար: Վոխպակ.

Անցեալ № -ում տպւած՝ «Վեհանձն 100 օսմ. սկի»-ի տեղ պէտք է լինէր՝ Վեհանձն 100 րուբլի:

Մեր կօմիտէների, ծանօթների և ընդհանրապէս մեզ դիմողների առանձին ուշադրութիւնն ենք Տրատարում նոր հասցէի վրայ:

Դաշնակցութեան անձամօթները խնդրում է թղթակցութեան եւ նւիրատութեան համար դիմել.

Gaspar, poste restante, Carouge (Suisse).
L. Boole, 15, Augustus Rd, Hammersmith, W. London.
Վիլննա, Դաշնակցութեան ազատ տպարան